ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2012 ԹՎԱԿԱՆԻ N 8-9 (1265-1266) Մայիս

Մայիսյան օրացույց

Մայիսի 1

Աշխատանքի օր

Աշխատանքը մեր գոյության օրենքն է, մարդկանց ու ազգերի առաջ տանող ամենամեծ սկզբունքը: Մարդկանց մեծամասնության համար աշխատանքը անհրաժեշտ մի բան է, որից կախված է նրա կյանքը: Այսպես թե այնպես՝ բոլորս էլ պարտավոր ենք աշխատել, որպեսզի արժանավայել կյանք վարենք:

Մայիսի 1

Հրաչյա Բունիաթյան-105

Հայ կենսաքիմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Հ. Բունիաթյանը: 1939-41-ին եղել է Երևանի բժշկական ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1942-46-ին՝ ԵՊՀ ռեկտոր:

Մայիսի 3

Մամուլի ազատության համաշխարհային օր

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր վեհաժողովի կողմից 1993-ին սահմանվեց մամուլի ազատության համաշխարհային օր, և դրանից հետո յուրաքանչյուր տարի մայիսի 3-ը նշվում է որպես ազատ մամուլի պաշտպանության համաշխարհային օր:

Մայիսի 8

Երկրապահի օր

Երկիրը պաշտպանելու ներքին մղումով, կանգնեցիք կողք կողքի, եղաք և՛ զինվոր, և՛ հրամանատար, երդվեցիք վերադառնալ հաղթանակով և կռեցիք այդ հաղթանակը՝ Արցախյան ազատամարտի բոլոր ճակատներում:

Ձեր շարքերից սկիզբ առան ազգային բանակի նորաստեղծ ստորաբաժանումները: Հակառակորդը պարտվեց ձեր հավաքական ուժի զորությունից: Իսկ Շուշիի ազատագրումը առաջինն էր բաղձալի հաղթանակների շարքում:

Մայիսի 9

Շուշիի ազատագրման օր



1992 թվականի մայիսի 9-ին ազատագրվեց հայոց բերդաքաղաք Շուշին: Փառապանծ հաղթանակից անցել է 20 տարի: Նոր բան, թերևս, հնարավոր չէ գտնել, սակայն կարելի է նույնն անընդհատ կրկնել, քանզի հաղթանակների գնահատումով է բարձրանում ոգին, հաղթանակի դասն է կրթում այսօրվա զինվորին, մեզ՝ ապրողներիս ստիպում գոնե մտքում խոնարհվել՝ հանուն հաղթանակի ու հայրենիքի արժանապատվության կյանքը զոհածների առաջ...

Մայիսի 9

Հաղթանակի և խաղաղության օր

Ազգերի հիշողության մեջ հաղթանակները թողնում են անջնջելի հետք, և այս օրը մեր տոնացույցի փառավոր էջերից մեկն է: Մայիսի 9-ի խորհուրդը մեզ համար աշխարհում մարդկանց ու ազգերի խաղաղ և ազատ ապրելու աստվածաշնորհ իրավունքի պաշտպանությունն ու հաստատումն է:

Հիշում ենք, որ ֆաշիզմի ու մարդատյացության դեմ Մեծ հայրենականում մեր հայրերն ու պապերն արյան գնով նվաճեցին ոչ միայն մեծ երկրի հաղթանակը, այլև պահեցին իրենց երկիրը՝ հայ-թուրքական սահմանի վրա գրոհի հրահանգի սպասող թուրքական արշավանքից:

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

Գլխավոր խմբագիր
ՍԵԴԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ
Editor Seda KH. TOROSYAN

Թղթակից
ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Անգլերեն նյութերի պատասխանատու
ԱՆԱՀԻՏ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ

Համակարգչային ձևավորումը
ՀԱՍՄԻԿ ԱԲԵԼՅԱՆԻ

Լրատվական գործունեություն իրականացող՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան պետական ոչ առևտրային կազմակերպություն

Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում:

Գրանցման վկայական N 299: Տպագրվում է «ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ հրատարակչությունում

Հեռախոս՝ 56-21-91, 2-43,
E-mail: apagabzhishk@ysmu.am
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Անվճար

Մայիսի 15

Ընտանիքի օր

ՀՀ պաշտոնական տոնացույցում ամրագրվել է «Ընտանիքի տոնը»:

Մայիսի 19

Թանգարանների միջազգային օր

Ինչպես ամբողջ աշխարհում, մայիսի 19-ին Հայաստանում նույնպես կնշվի Թանգարանների միջազգային օրը: Այդ օրը Երևանի և մարզերի բոլոր թանգարանների դռները մինչև կեսգիշեր բաց կլինեն բոլոր այցելուների առջև:

1958 թվական, մաիսի 22

Սիրելի ընթերցող, իմ կենսագրությունը չափազանց հետաքրքիր է:

1958-ը Երևանի բժշկական ինստիտուտի կյանքում նշանավորվեց մեծ իրադարձությամբ: Սկսեց լույս տեսնել բժշկական ինստիտուտի տարեգիրը՝ «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» թերթը: 1958 թվականի մայիսի 22-ից առ այսօր ես լույս եմ տեսել 1265 անգամ՝ տարբեր տպաքանակներով, տարբեր ձևաչափերով, սև ու սպիտակ, գունավոր:

Եվ իմ հերոսը միշտ դու ես եղել, քո մասին եմ գրել, քեզ համար եմ գրել...

Մայիսի 26

Ավարայրի ճակատամարտ

Մայիսի 28

Սարդարապատի ճակատամարտ

1918 թվական, մայիսի 28

ՀՀ Առաջին հանրապետության հռչակման օր

Հանրապետության հռչակմանը նախորդել են Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը կարողացավ վերջապես վերականգնել պետականությունը:

Սարդարապատից երկու օր անց Թիֆլիսում նստող Հայոց ազգային խորհուրդը հռչակեց հայոց պետականության վերականգնումը՝ ազգային դրոշով, հայոց եռագույնով, հայոց զինանշանով:

1989թ. մայիսի 26-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը 1918թ. մայիսի 28-ը հայտարարեց հայկական պետականության վերականգնման՝ Հայաստանի Առաջին հանրապետության հռչակման օր:

Մայիսի 31

Ծխելու դեմ պայքարի համաշխարհային օր

Հնդկաստանի դեսպանը հրաժեշտ տվեց ԵՊԲՀ-ի ռեկտորին

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանն արդեն երկար տարիներ է, ինչ համագործակցում է Հնդկաստանի հետ, որի արդյունքում մոտ 1200 հնդիկներ են ավարտել բուհը:

Պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը, որպես համալսարանի ռեկտոր, իր պաշտոնական առաջին հանդիպումը հենց Հնդկաստանի դեսպան Աչալ Կումար Մալհոտրայի հետ է ունեցել:

Այդ և հետագա մյուս հանդիպումների ընթացքում նրանք հնդիկ ուսանողների կրթական հարցերին, երկու ժողովուրդների մշակութային կապերին վերաբերող բազմաթիվ քննարկումներ են ունեցել:

Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աչալ Կումար Մալհոտրան ավարտում է դիվանագիտական առաքելությունը մեր երկրում:

Ապրիլի 17-ին նա եկել էր հրաժեշտ տալու ԵՊԲՀ-ի ռեկտորին:

«Բավական արագ անցավ իմ պաշտոնավարման երեք տարին: Դա նշանակում է, որ Երևանում հետաքրքիր ու բովանդակալից աշխատանք է կատարվել: Պետական բազմաթիվ կառույցների հետ են հարաբերություններ ստեղծվել ու զարգացել: Սակայն իմ սրտում հատուկ տեղ ունի պետական բժշկական համալսարանը, որտեղ այսօր իմ հայրենիքից 500 ուսանող է սովորում: Այս հանգամանքը մեր հարաբերությունները յուրահատուկ է դարձրել»,-ասաց դեսպանը:

Նա՝ ինչպես Դերենիկ Դումայանին, այնպես էլ բուհի անձնակազմին իր երախտիքը հայտնեց հնդիկ ուսանողների հանդեպ ջերմ վերաբերմունքի, նրանց հոգսերով ապրելու համար:

«Վստահ եմ, որ իմ հայրենակիցներն, ավարտելով այս բուհը, ոչ միայն լավ մասնագետներ, այլև լավ մարդիկ կդառնան: Ես ընդմիշտ կմնամ Հայաստանի բարեկամն ու ընկերը և պատրաստ եմ անհրաժեշտության դեպքում աջակից լինել բժշկական կրթության հետ առնչվող ցանկացած հարցի: Կսատարեմ իմ հայրենիքում Երևանի պետական բժշկական համալսարանի մասին ձևավորված բարի համբավը բարձր պահելուն»,-հավելեց Աչալ Կումար Մալհոտրան:

ԵՊԲՀ-ի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը ևս կարևորեց անցած մեկ տարում Հնդկաստանի հետ փոխհարաբերությունների խորացումն ու զարգացումը:

«Հուսով եմ, որ այս ընթացքում ձևավորված աշխատանքային ջերմ հարաբերությունները, հնդիկ ուսանողների կրթական խնդիրներին համակողմանի և հեռանկարային մոտեցումները կշարունակվեն: Այդ ուղղությամբ մենք միասին կարողացանք կարևոր շատ խնդիրների լուծումներ գտնել: Այս ամենը նաև բարեկամական ջերմ հարաբերությունների հիմք դարձավ: Վստահ եմ, որ մենք ապագայում ևս լավ բարեկամներ կմնանք»,-ասաց Դերենիկ Դումանյանը:

Հանդիպմանը մասնակցեց նաև ԵՊԲՀ-ի միջազգային կապերի գծով պրոռեկտոր Երվանդ Սահակյանը:

The Ambassador of India in Armenia visits YSMU before departure

The cooperation between Yerevan State Medical University and the Republic of India can safely be characterized as a long-term partnership – the number of university graduates - 1 200 students from India - is the best illustration of this.

It is noteworthy that the first official meeting of Prof. Derenik Dumanyan, the Rector of the University was held to welcome Mr. Achal Kumar Malhotra, Ambassador Plenipotentiary and Extraordinary of India to the Republic of Armenia.

Multiple issues regarding the students from India and the relationship between the two countries have been discussed throughout the meetings following the first official session.

Accomplishing his diplomatic mission in our country, Mr. Achal Kumar Malhotra, Ambassador Plenipotentiary and Extraordinary of India to the Republic of Armenia had arrived to the Medical University on April 17 to address farewell to the University Rector. The meeting was also attended by Dr. Yervand Sahakyan, Vice-Rector for University International Relations.

“My office term – these 3 years - passed rapidly, and that accounts for the comprehensive and interesting work we have accomplished in Yerevan. Strong partnership has been founded and developed with numerous state institutions. Yet, I would like to underscore the unique place that the Medical University has in my heart; a University where 500 students from my homeland receive education. This fact has shaped our strong bond and commitment to forging beneficial relationships,” said the Ambassador.

Expressing his gratitude both to the University Rector and the faculty for their cordial attitude toward the Indian students, the Ambassador Mr. Achal Kumar Malhotra added, “I am confident my countrymen will become not only leading specialists but also develop valued human qualities after graduating from the Medical University. I will always remain the loyal friend of Armenia and I am willing to assist in finding new avenues to the medical education issues if necessity arises. I will also support the preservation of the reputation medical university has in my country.”

Prof. Derenik Dumanyan emphasized the importance of having developed partnership with India within the last one year saying “I hope, the warm relationships promoted within this period and the approaches and perspectives regarding various issues of the medical education of Indian students will continue to strengthen afterwards. Our cooperation allowed us to find solutions to multiple important issues also serving a milestone for warm friendship. I am deeply sure we will maintain these ties and collaboration in the future,” said Prof. Dumanyan.

Աշխատավարձերը կբարձրանան, իսկ վարձավճարները չեն փոխվի

Հերթական գիտխորհրդի նիստում համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը նախ գիտխորհրդի անդամներին ներկայացրեց ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերը:

Ռեկտորը նաև տեղեկացրեց, որ գիտխորհրդի կողմից հաստատված կարգի համաձայն՝ համալսարանի երկու ամբիոններ անվանակոչվել են նշանավոր, վաստակաշատ գիտնականների անուններով:

«Մինչև այժմ ամբիոններից միայն այդ երկու հայտն է ներկայացվել: Դրանք մանրամասն քննարկվել են համապատասխան բոլոր ստորաբաժիններում: Արդյունքում ախտաբանական անատոմիայի ամբիոնն անվանակոչվել է պրոֆեսոր Արտաշես Բեգլարյանի, իսկ ֆարմակոլոգիայի ամբիոնը՝ Սիմոն Միրզոյանի անունով: Այլ ամբիոններից նման հայտեր ստանալու դեպքում դրանք ևս կդնենք քննարկման»,-ասաց Դերենիկ Դումանյանը:

Գիտական խորհուրդը միաձայն հաստատեց ռեկտորի կողմից ներկայացված 2012-13 ուսումնական տարվա ուսման վարձաչափերի վճարման փոխհատուցման կարգը: Ըստ դրա՝ համալսարանի վճարովի համակարգում սովորող ՀՀ քաղաքացիների համար (ուսանողների, ինտերնների, կլինիկական օրդինատորների և ասպիրանտների) ուսման տարեկան վարձաչափերը փոփոխության չեն ենթարկվի:

Որոշակիորեն կավելանան արտասահմանցի դիմորդների վարձաչափերը: Դա կվերաբերվի նոր ընդունվողներին:

Գիտխորհուրդը միաձայն հաստատեց նաև համալսարանի «Ներքին կարգապահական կանոնակարգը» և «Ռեկտորատի կանոնակարգը»:

«Գիտխորհրդի նախորդ նիստերից մեկի ժամանակ ես խոստացել էի, որ առաջին հերթին պետք է բարձրացնենք տեսական ամբիոնների աշխատակիցների աշխատավարձերը: Այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ են տարվել, և ուրախությամբ հայտնում եմ, որ սեպտեմբերի 1-ից տեսական 33 ամբիոնի աշխատակիցների աշխատավարձերը տնտեսագիտական բոլոր հիմնավորումներով կբարձրանան 60-125 հազար դրամով: Այդ գումարների աղբյուրները մենք ունենք: Ամբիոնների մասնագետները և համալսարանի հնաբնակները համարում են, որ այս փուլում սա լուրջ ձեռքբերում է: Այժմ մենք հաշվարկներ ենք կատարում, որպեսզի ճշտենք, թե որքան գումար է անհրաժեշտ սպասարկող անձնակազմի աշխատավարձերը ևս բարձրացնելու համար: Ամենայն հավանականությամբ կկարողանանք միջոցներ գտնել սեպտեմբերի 1-ից, թեև ոչ այդ մեծությամբ, բարձրացնել նաև մեր այդ աշխատակիցների աշխատավարձերը»,-ասաց Դերենիկ Դումանյանը:

Գիտական խորհրդի ապրիլի 25-ին կայացած նիստի օրակարգում նախատեսված էին նաև ամբիոնի վարիչի և պրոֆեսորի պաշտոնների ընտրություններ:

Գիտական քարտուղար Տաթևիկ Ավագյանը տեղեկացրեց, որ նյարդավիրաբուժության, մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 1, հյուսվածաբանության, հոգեբուժության, ֆիզիոլոգիայի, կենսաքիմիայի, ֆիզիկական դաստիարակության, ինչպես նաև հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի նեոնաթոլոգիայի և մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնների վարիչների և 11 ամբիոնների պրոֆեսորների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար ներկայացվել են մեկական հայտեր:

Գիտքարտուղարը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց թեկնածուների համառոտ գործունեությունը, աշխատանքային ու գիտական ձեռքբերումները և հայտնեց, որ բոլորի թեկնածությունները միաձայն երաշխավորվել են համալսարանի որակավորման հանձնաժողովի և ֆակուլտետային խորհրդի կողմից:

Ներկայացված բոլոր թեկնածուներն ընտրվեցին ձայների ճնշող մեծամասնությամբ:

Այցելություն Ծիծեռնակաբերդ

Ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցի կապակցությամբ, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական անձնակազմը ռեկտոր Դերենիկ Դումանյանի գլխավորությամբ այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Համալսարանականները ծաղկեպսակ դրեցին հուշակոթողին և գլուխ խոնարհեցին անմեղ նահատակների հիշատակի առաջ:

Ոգեկոչվեց ցեղասպանության զոհերի հիշատակը

Նախօրեին համալսարանի պատմության ամբիոնի վարիչ Արմենուհի Ղամբարյանը Հայոց ցեղասպանությանը նվիրված գրական-գեղարվեստական միջոցառում էր կազմակերպել: Ընդհանուր բժշկության և դեղագիտական ֆակուլտետների ուսանողները, վերաբացելով մեր ժողովրդի պատմության ամենաողբերգական էջը, ապրողաց կոչ արեցին արարելով ու նոր նվաճումներով հաղթահարել Մեծ եղեռնի հսկայական ցավը:

Ռեկտորը հանդիպեց մագիստրատուրան ավարտողների հետ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը շարունակում է հանդիպումները ավարտական կուրսերի ուսանողների հետ: Այս անգամ նա ունկնդրեց դեղագիտական և ստոմատոլոգիական ֆակուլտետների մագիստրատուրան ավարտողներին հետաքրքրող և մտահոգող հարցերը:

Իսկ ուսանողներին հետաքրքրում էին թե՛ հետբուհական ու շարունակական կրթության այժմյան հնարավորությունները, թե՛ ընթացիկ ու պետական քննությունների հետ կապված կազմակերպական հարցեր:

Արդյո՞ք մագիստրատուրան ավարտողներն իրավունք ունեն որպես բժիշկ աշխատել, արդյո՞ք հետբուհական կրթության գների կամ ժամկետների փոփոխություններ սպասվում են, կլինիկական օրդինատորները հնարավորություն ունե՞ն ընտրելու կլինիկական բազան, հետդիպլոմային կրթությունն արտասահմանում ստանալու ի՞նչ հնարավորություններ կան. ահա ուսանողներին հետաքրքրող հարցերի ոչ ամբողջական ցանկը:

Ռեկտոր Դերենիկ Դումայանն ասաց, որ կլինիկական օրդինատուրայի ծրագրի յուրացումից, ավարտական քննության հանձնումից հետո բժիշկներին տրվող դիպլոմն է թույլ տալիս առողջապահության ոլորտում աշխատել որպես բժիշկ: Կլինիկական օրդինատորներն իրենք են ընտրում թե՛ կլինիկան, թե՛ ղեկավարին: Կլինիկական օրդինատորները համալսարանական հիվանդանոցներում և պոլիկլինիկաներում, ինչպես նաև ՀՀ ՊՆ հոսպիտալներում, համագործակցող դեղատներում կիրառում են իրենց ստացած գիտելիքները հաստատությունների առաջատար մասնագետների հսկողությամբ: Նա նաև տեղեկացրեց, որ հետդիպլոմային կրթության ո՛չ գները և ո՛չ էլ ժամկետները նախորդ տարվա համեմատությամբ որևէ փոփոխության չեն ենթարկվել:

Ռեկտոր Դերենիկ Դումանյանը և պրոռեկտոր Սամվել Ավետիսյանը սպառիչ պատասխաններ տվեցին հնչած բոլոր հարցերին: Կարևորվեց, որ ընթացիկ և պետական քննությունների այս տարվա գրաֆիկն ուսանողներին ինչպես նախապատրաստվելու, այնպես էլ ընթացիկ պարտքերը վերահանձնելու ավելի մեծ հնարավորություն է տալիս:

Ուսանողներին միաժամանակ հորդորեցին բարձրացված շատ հարցերի հստակ պատասխանները ստանալու համար համալսարանի կայքից ծանոթանալ բակալավրիատի եվ մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման եվ անցկացման կարգին:

Հանդիպման ընթացքում ռեկտորն ուսանողներին ներկայացրեց պետական քննությունների հանձնաժողովների նախագահներին:

«Հանձնաժողովներին հանձնարարվել է պետական քննություններն անցկացնել օբյեկտիվ, լինել բարյացկամ և զերծ մնալ ավելորդ լարվածություններից: Այնպես որ՝ այսօրվանից խելամտորեն օգտագործեք ձեր ժամանակը և ապավինեք միայն ձեր գիտելիքներին»,- ասաց ռեկտորը:

Ուսանողները հեռացվեցին բացակայությունների պատճառով

ԵՊԲՀ-ի ռեկտորատի հերթական նիստում քննարկվեց ուսանողների մեծաթիվ անհարգելի բացակայությունների հարցը: Պրոռեկտոր Սամվել Ավետիսյանը, տեղեկացնելով փետրվար-մարտ ամիսների ընթացքում ուսանողների անհարգելի բացակայությունների մասին, ռեկտորատի քննարկմանը ներկայացրեց 6 ուսանողի հեռացման և 56 ուսանողի ռեկտորատային նկատողություն տալու հարցը:

Ռեկտորատը միաձայն որոշում կայացրեց նրանց հեռացման մասին:

Հեռացվողներից 4-ն օտարերկրացիներ են: Մեծաթիվ անհարգելի բացակայություններ ունեցող օտարերկրացիներից մեկը նախապատրաստական բաժնից է: ՀՀ քաղաքացի ուսանողները ընդհանուր բժշկության և դեղագիտական ֆակուլտետների ուսանողներ էին:

«Այս հարցը բազմաթիվ անգամ քննարկվել է, փորձ է արվել խնդիրը կարգավորել, սակայն դրական արդյունքի չենք հասել: Իրավիճակն այնպիսին է, որ ստիպված ենք ենթարկվել համալսարանի նեքին կարգապահական կանոնակարգին և հեռացնել այս ուսանողներին: Մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ տեղացի ուսանողներից մեկն ամուսնացել է, որի մասին տեղյակ չէին անգամ ծնողները, և որոշել է ուսումը շարունակել եկող տարի»,- նշեց ռեկտոր Դերենիկ Դումանյանը:

Օրակարգում նաև օտարերկրացների ուսուցման դեկանատի ուսանողին կարգապահական կանոնները խախտելու համար հեռացման ներկայացնելու հարցն էր:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Սամվել Ավետիսյանը հիշեցրեց ռեկտորատին այս տարվա երկրորդ մարման ժամանակ քննարկած մի հարց, որը վերաբերում էր օտարերկրացի 4 ուսանողների կողմից ստուգման գրքույկների նկարները փոխելուն: Այն ժամանակ ռեկտորատը որոշեց այդ ուսանողներին չհեռացնել, այլ բավարարվել ռեկտորատային նկատողություն տալով՝ հնարավորություն ընձեռելով շարունակել ուսումը: Նրանցից մեկը «ֆիզիկա» առարկայի հարցման ժամանակ բջջային հեռախոսով նկարել է հարցման թեստերը և փորձել փոխանցել, ինչը նրան չի հաջողվել: Դա ընկալվեց որպես համալսարանում գործող ներքին կանոնակարգին ենթարկվել չցանկանալու միտում, և ռեկտորատը որոշում կայացրեց այդ ուսանողին ևս հեռացնել:

Որոշվեց հեռացումների մասին ռեկտորատի այս որոշումն ընթերցել բոլոր կուրսերում, որպեսզի նման երևույթներն առաջիկայում հնարավորինս կանխվեն:

Ռեկտորատն անդրադարձավ նաև համալսարանի տարածքում, ինչպես նաև բակում ծխելու դեմ պայքարն ուժեղացնելու խնդրին: Ռեկտոր Դերենիկ Դումանյանը հանձնարարեց, որպեսզի դեկանատներն այս հարցում առավել խիստ և հետևողական լինեն: Հորդորեց ամենուր ծխելն արգելող ցուցանակներ փակցնել:

Unexcused absences result in the expulsion of students

The number of unexcused absences of students, which was great indeed, was discussed at one of the Rector's Council regular sessions of Yerevan State Medical University. As a result, 56 students were issued reprimands following the expulsion of six students for unexcused absences.

An international student was also expelled from the University for breaching the university internal regulations twice.

Another issue was underscored regarding smoking both within the University and the campus; the University Deans' offices concurred in being much stricter and consistent in the workings toward setting prohibition on smoking.

Արմեն Աշոտյան.

Հայաստանը դառնում է ուղեղային կենտրոն

Ապրիլի 26-27-ին Բուխարեստում կայացել է Բոլոնիայի նախարարական հերթական գագաթնաժողովը, որտեղ Հայաստանը պաշտոնապես հաստատվել է որպես երկիր, որը գալիք երեք տարիների ընթացքում հյուրընկալելու է Բոլոնիայի քարտուղարությանը, իսկ 2015 թվականին Երևանում է կազմակերպվելու Բոլոնիայի գործընթացին անդամակից երկրների նախարարական գագաթաժողովը:

Այդ առիթով տրված իր հարցազրույցներում ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը մանրամասնում է, թե ինչ է ենթադրում այս ամենը Հայաստանի համար: «Նախ Հայաստանը պետք է ձևավորի ազգային փորձագետների թիմ, որը պատասխանատու կլինի այս 3 տարիների ընթացքում Եվրոպայի բարձրագույն կրթության ողջ տարածքում կրթական բարեփոխումների քաղաքականության մշակման, համակարգման, ուղղորդման համար: Այսինքն Հայաստանը դառնում է այն ուղեղային կենտրոնը և պատասխանատու երկիրը, որը պետք է համակարգի, սպասարկի Եվրոպայի բարձրագույն կրթական տարածքը, որը միավորում է 47 երկիր: 3 տարի Հայաստանի փորձագետները և ՀՀ ԿԳ նախարարությունը պատասխանատու են լինելու Բոլոնիայի գործընթացի շրջանակներում քաղաքականության իրականացման, աշխատանքային խմբերի գործունեության, համապատասխան տեղեկատվական ռեսուրսների գործարկման համար, ինչը ենթադրում է հսկայական պատասխանատվություն»:

Բուխարեստյան նախարարական գագաթաժողովի վերաբերյալ պարոն Աշոտյանը նշում է. «Վերջինիս եվրոպական երկրների նախարարներից զատ, մասնակցում էին նաև այլ երկրների կրթական ոլորտի պատասխանատուներ: 2015-ին Երևանում կայանալիք նախարարական գագաթաժողովին ակնկալվում է շուրջ 90 պատվիրակությունների մասնակցություն, իսկ գագաթաժողովը մեր երկրում անցկացնելը համարում եմ աննախադեպ հաջողություն, որն ունի 2 երես կամ բաղադրիչ: Մեկը կրթական բաղադրիչն է, ինչը նշանակում է, որ Հայաստանի կրթական ոլորտը ճանաչելի է Եվրոպական կրթական տարածքում, և կրթական պատասխանատու մարմինը մեզ վստահելի գործընկեր է համարում, իսկ մեր կողմից իրականացված քաղաքականությունը՝ համահունչ է եվրոպական բարձրագույն կրթական տարածքում տեղին ունեցող գործընթացներին: Անչափ կարևոր է նաև երկրորդ բաղադրիչը՝ քաղաքականը: Նման լուրջ առաքելության համար Հայաստանին վստահելը նշանակում է՝ ճանաչել Հայաստանի եվրոպական ինտեգրման ուղղությամբ գործադրվող ջանքերը, Արևելյան գործընկերության շրջանակներում ընդգծել՝ Հայաստանը որպես երկիր, որը լավագույններից է բարեփոխումների, քաղաքական տրանսֆորմացիայի ճանապարհին: Փաստորեն Հայաստանը զատվում է մի շարք այլ երկրներից, որովհետև փաստացի առաջին ԱՊՀ և առաջին հարավկովկասյան երկիրն ենք, որը բացառիկն է ոչ ԵՄ անդամ երկրների շարքում, ում վստահվել է նման պարտականություն»:

Վերջին շրջանում հաճախակի արծածվող բուհական ինքնավարության մասին Ա. Աշոտյանը նշում է. «Վերջերս թեման իսկապես շատ է արծարծվում և արծարծվում է, ցավոք, ոչ պրոֆեսիոնալ ու ավելի շատ հռետորաբանության և հանրային ելույթների փաթեթավորման ձևով: Մասնագիտական մոտեցումների գրեթե չենք հանդիպում: Բուհական ինքնավարությունը և ակադեմիական ազատությունները ունեն հստակ չափման մեխանիզմներ և չափորոշիչներ: Այս հարցով շատ ինտենսիվ զբաղվել է Եվրոպական համալսարանների ասոցիացիան՝ սահմանելով հստակ չափանիշներ: Այնպես որ, կոչ եմ անում խնդրով իրականում հետաքրքրված մարդկանց ավելի պրոֆեսիոնալ կարծիքներ հայտնել և առանց ձևականության և շահարկումների: Փաստեմ, որ Հայաստանի դիրքերն այսօր բուհական ինքնավարության և ակադեմիական ազատությունների տեսակետից միջինն են Եվրոպայում: Իհարկե կան երկրներ, որտեղ օրենսդրությունն ավելի լիբերալ է, որոշներում էլ՝ օրենսդրությունն ավելի խիստ է: Ակադեմիական ազատությունները և ինստիտուցիոնալ ինքնավարությունը ենթադրում են հետևյալ բաղադրիչները? բուհի ղեկավարման, աշխատուժի լրացման, ակադեմիական ազատություն (կրթական բովանդակություն և այլն), ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեության ազատություն: Որոշ չափանիշներով հայաստանյան բուհերն ավելի ինքնավար են, քան Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների կրթական հաստատությունները: Սրանք մերկապարանոց խոսքեր չեն: Մենք իրականում բարվոք վիճակում ենք: Կառավարությունը վերջին 2 տարվա ընթացքում մշակում է բուհական ազատությունների, ինքնավարության ընդլայնման ծրագիր: Այս տարվա ընթացքում նախատեսում ենք նաև պետական բուհերից մեկի հետ իրականացնել պիլոտային ծրագիր, որի արդյունքում փոխելով բուհի կազմակերպչաիրավական ձևը, կտեսնենք, թե բուհն ինչպես է կարողանում զարգանալ՝ ավելի մեծ ազատությունների պարագայում: Հաջորդ տարեվերջին ամփոփելով նախագիծը, դրական արդյունքների դեպքում այս փորձը կտարածենք այլ բուհերի վրա, որոնք պատրաստ կլինեն ավելի մեծ ինքնավարության: Նորից եմ ուզում կրկնել՝ ինքնավարությունը հռետորաբանություն չէ, բուհական ինքնավարությունը և ազատությունները պետք է տեղավորվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում»:

ԵՊԲՀ-ն ավիաբժիշկներ կպատրաստի

Հայ-իսպանական համագործակցություն

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության և Եվրամիության հանձնաժողովի «Թվինինգ» ծրագրով համագործակցության շրջանակներում իրականացվում են ՀՀ քաղաքացիական ավիացիայի անվտանգության համակարգի բարեփոխումներ՝ Եվրոմիության ավիացիոն անվտանգության գործակալության (ԵԱԱԳ) պահանջներին համապատասխան՝ 2013-ի գարնանն այդ կառույցում ներգրավվելու հայցի նախապատրաստման նպատակով:

Ավիացիոն անվտանգության կարևոր բաղադրիչ է թռիչքային անձնակազմերի բժշկական փորձաքննությունը: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է բժշկական փորձաքննություն իրականացնող բժիշկների վերապատրաստում՝ «ավիացիոն բժշկություն» մասնագիտությամբ:

Բարեփոխումների այս ծրագիրն իրականացվում է Իսպանիայի քաղաքացիական ավիացիայի մասնագետների աջակցությամբ:

Հյուրընկալվելով Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանին, ԵՄ «Թվինինգ» ծրագրի Հայաստանում մշտական խորհրդատու Սամուել Օտտո Սանչես Սեռառանոն նշեց, որ «Հայաստանի քաղաքացիական ավացիայի գլխավոր վարչության կարողությունների ուժեղացում» բաղադրիչի իրականացման ընթացքում ակնհայտ է դարձել Հայաստանում ավիացիոն բժիշկների թե՛ պատպաստման, թե՛ վերապատրաստման անհրաժեշտությունը: Նրա հետ էին Իսպանիայի Կամիլո Խոսե Սելա համալսարանի ներկայացուցիչները:

«Իհարկե, հեշտությամբ կարելի էր Թվինինգ ծրագրի ֆինանսավորումով Հայաստանի ավիցիոն բժիշկների եվրոպական չափորոշիչներին համապատասխանող դասընթաց կազմակերպել: Բայց որպեսզի ապահովվի կարևոր այս գործընթացի շարունակականությունը, նպատակահարմար գտանք Երևանի պետական բժշկական համալսարանին առաջարկել այս ոլորտում համագործակցել Մադրիդի Կամիլո Խոսե Սելա հեղինակավոր համալսարանի հետ, որն ավիացիայի թռիչքային անձնակազմին սպասարկող բժշկական կադրերի եվրոպական չափորոշիչներին համապատասխան՝ պատրաստման և վերապատրաստման մեծ փորձառություն ունի:

Մադրիդի այս համալսարանի ավիացիոն բժշկության մասնագետները պատրաստ են այս ոլորտում համագործակցել Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ և համատեղ անցկացնել վերապատրաստման դասընթաց, որն ընդունվել է Իսպանիայի ավիացիոն անվտանգության գործակալության կողմից:

Համալսարանի ավիացիոն բժշկության կուրսի ղեկավար Լուիս Կոնդեն շեշտեց, որ իրենց համալսարանն այս ծրագրում ընդգրկում է ամենաբարձր որակավորում ունեցող մասնագետներին ու դասախոսներին:

Առաջարկվեց երկշաբաթյա առաջին համատեղ դասընթացը կազմակերպել հունիսին: Հայաստանի քաղաքացիական ավացիայի բժշկական բաժնում ծառայություններ մատուցող 10 նեղ մասնագետներին և ԵՊԲՀ-ի մի խումբ դասախոսներին Իսպանիայից ժամանած մասնագետները կվերապատրաստեն եվրոպական ժամանակակից պահանջներին համապատասխան: Դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցները կստանան Իսպանիայի Կամիլո Խոսե Մելա և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանների ռեկտորների ստորագրությամբ վկայագրեր, որոնք կճանաչվեն Եվրոպայի ավիացիոն անվտանգության գործակալության անդամ բոլոր երկրների կողմից:

Իսպանացի հյուրերն իրենց հայ գործընկերներին ներկայացրին դասընթացի ծրագիրը և պատ-

ռաստակամություն հայտնեցին այս խնդրի շուրջ ԵՊԲՀ-ի հետ համագործակցել նաև հետագա հնարավոր զարգացումների դեպքում:

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը, կարևորելով ներկայացված ծրագիրը, շեշտեց, որ այն համահունչ է ԵՊԲՀ-ի այսօրվա մոտեցումներին.

«Մենք այսօր գնում ենք անհրաժեշտ այն մասնագիտությունների զարգացման ճանապարհով, որոնք թույլ են կամ՝ չունենք: Այս ենթատեքստում վերականգնել ենք նախկին սանիտարահիգիենիկ, այժմ՝ հանրային առողջության ֆակուլտետը: Շուտով կվերաբացվի նաև մանկաբուժության ֆակուլտետը, կզարգացնենք սպորտային բժշկությունը:

Անտարակույս, մեզ համար խիստ արդիական է նաև իր յուրահատուկություններն ունեցող ավիացիոն բժիշկների պատրաստումը: Այն սիրով կիրականացնենք առաջարկվող ծրագրով՝ ընդգրկելով հետդիպլոմային կրթության մեջ: Մենք պատրաստ ենք բոլոր առումներով աջակցել այս ծրագրի կայացմանը»,-ասաց Դերենիկ Դումանյանը:

«Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության համակարգ ինտեգրվելու համար Հայաստանում, փաստորեն, նոր կառուցվածք ենք ներդնում: Այս վերապատրաստումներն իրականացնելիս պետք է առաջնորդվենք եվրոպական օրենսդրությամբ՝ հաշվի առնելով մի շարք ընթացակարգեր: Դասընթացի հիմնական նպատակն է ավիացիայի ոլորտում աշխատանքի փորձ ունեցող բժիշկներին զինել այնպիսի կարողություններով ու հմտություններով, որ կարողանան եվրոպական օրենսդրությունից բխող պահանջները կիրառել ավիացիայի ոլորտում»,-ասաց Լուիս Կոնդեն:

Որոշվեց, որ առաջիկա աշխատանքային քննարկումներից հետո երկու համալսարանների ղեկավարները կստորագրեն երկուստեք կարևորվող համագործակցությունը վավերացնող համաձայնագիր, որը կապահովի եվրոպական օրենսդրության պայմանները բավարարող ծրագրերով դասընթացների համատեղ կազմակերպումը:

Հանդիպմանը մասնակցում էին ԵՊԲՀ-ի ուսումնական աշխատանքների և միջազգային կապերի գծով պրոռեկտորներ Սամվել Ավետիսյանը և Երվանդ Սահակյանը:



Հոբելյան

ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ (Գրո) – 125

2012-ը բժշկական համալսարանի երատավորներից մեկի՝ հոգեբուժության և նյարդային հիվանդությունների ամբիոնի հիմնադիր վարիչ (1930-37թթ.), մինչև 1930թ. ՀՀ առժողկոմատում մի շարք պատասխանատու պաշտոններ վարած, 1936-ին նյարդաբանական տերմինների հայերեն առաջին բժշկագիտական բառարանի հեղինակ, պրոֆեսոր Գրիգոր Աբրահամի Տեր-Հակոբյանի (Գրո) 125-ամյակի տարին է:

1905թ. Երևանում ավարտելով գիմնազիան Գ. Տեր-Հակոբյանը ընդունվել է Մոսկվայի համալսարանի բնագիտության ֆակուլտետ: 1906-ին ընդունվել է Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետ, որտեղ ուսանելու տարիներին մասնակցել է ցույցերի, որոնցից մեկի ժամանակ ձերբակալվել է: Բանտարկությունից հետո մեկնել է Մոսկվա, հանձնել ավարտական քննությունները և ստացել բժշկի կոչում:

Նորավարտ բժիշկը մի քանի տարի ղեկավարել է ՀՀ առժողկոմատի բուժական բաժինը, իսկ 1926թ. միաժամանակ որպես ասիստենտ աշխատել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի հոգեբուժության ամբիոնում: 1930թ. նշանակվել է Երևանի բժշկական ինստիտուտի հոգեբուժության ամբիոնի վարիչ, որտեղ աշխատել է մինչև 1937 թվականը:

Բարձր գնահատելով նրա գիտամանկավարժական գործունեությունը՝ Հայաստանի առժողկոմատին կից բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովն առանց գիտական թեզ պաշտպանության բժիշկ Գրիգոր Տեր-Հակոբյանին շնորհել է գիտության թեկնածուի աստիճան և պրոֆեսորի կոչում:

Նույն տարում՝ ստալինյան հալածանքների արդյունքում ձերբակալվել է և աքսորվել Ակմոլինսկ, այնուհետև՝ Կարագանդա:

1947 թվականին՝ արդարացվելուց հետո վերադարձել է Երևան և նշանակվել մանկական լոգոպեդիկ կաբինետի, իսկ 1953-ին՝ փսիխոթերապիայի կաբինետի վարիչ:

Ի թիվս մի շարք աշխատությունների՝ Ա. Հ. Մելիքյանի հետ համատեղ նա կատարել է նաև «Նյարդային հիվանդություններ» դասագրքի առաջին թարգմանությունը:

Օրերս, ԵՊԲՀ Ուսանողական խորհրդարանի նախաձեռնությամբ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումների շրջանակներում, տեղի ունեցավ «Վանա ծովուն Արշալույսը» ֆիլմի ցուցադրությունը:

Դիտումն ավարտվեց քննարկումով: Հանդիսատեսի հարցերին պատասխանում էին կինոնկարի ռեժիսոր Վահան Ստեփանյանը և սցենարի հեղինակ՝ Արմեն Վաթյանը:

Հատկապես տպավորիչ էր ֆիլմում Կարապետ Փամբուկչյանի կերպարը, որով հեղինակները փորձ էին արել կերտել հավաքական հայ մարդու մի կերպար. Հայ մարդու՝ ով հավատացած է, որ իր կյանքից հետո անգամ չպիտի չորանա իր խնամած ծառի արմատը, Հայ մարդու՝ ով հավատով ու վստահությամբ սպասում է ծառի ծաղկելուն՝ Հայոց զարթոնքին, և որպես պատգամ՝ կտակում իր սերունդներին Հայ լինելու սրբազան պատիվը:

Հանդիսատեսը շնորհակալություն հայտնեց հեղինակներին՝ ևս մեկ անգամ փաստելով, որ նման ֆիլմերի պակաս շատ ունենք: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ հեղինակները հանձն են առել շոշափել այնպիսի հարցեր, որոնց դիպչելուց առաջ երկար խորհել է պետք՝ արդյո՞ք կկարողանաս պատվով դուրս գալ: Այդ առնչությամբ պետք է փաստենք, որ ֆիլմը հաջողվել է: Այդ էին վկայում ֆիլմի ավարտին հանդիսատեսներից շատերի աչքերին երևացող արցունքները:

Մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել ֆիլմի հեղինակներին և բոլոր նրանց, ովքեր աջակցել են ֆիլմի ստեղծմանը: Այսօր տարբեր նախագծեր են ֆինանսավորվում և նախագծերի այդ բազմազանության մեջ հատկապես կարևոր ենք համարում հայկական արժեքների պրոպագանդային նպաստող ծրագրերի ֆինանսավորումը: Այս ֆիլմը ևս այն ցայտուն օրինակներից է, որը գալիս է ապացուցելու, որ բավարար ուշադրություն հատկացնելու դեպքում մենք՝ ազգային արժեքների պահպանմանը և տարածմանը համատեղ, նորից կունենաք նաև համաշխարհային մակարդակով մրցունակ կինո:

ԶԱՔԱՐ ԽՈՋԱԲԱՂՅԱՆ

Ընտրությունների արդյունքում ունենք ամբիոնների ընտրված վարիչներ և պրոֆեսորներ

2011թվականի հոկտեմբեր ամսից սկսվել է ԵՊԲՀ ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության գործընթացը: Դրան զուգահեռ համալսարանի ռեկտոր, պրոֆ. Դ.Հ.Դումանյանի կողմից հաստատվել է ամբիոնների հաստիքակազմի և դասախոսների տարակարգերի մասին բժշկական համալսարանի կարգը:
Այս առնչությամբ է մեր զրույցը Երևանի պետական բժշկական համալսարանի գիտխորհրդի գիտական քարտուղար, պրոֆեսոր Տաթևիկ Ավագյանի հետ, ում խնդրեցինք պատմել այն նոր կարգի մասին, որը օգտագործվում է ամբիոնի վարիչների և դասախոսների ընտրության ժամանակ:

Ամբիոնների հաստիքակազմի և դասախոսների տարակարգերի մասին բժշկական համալսարանի կարգի կիրառման արդյունքում հստակեցվել է կարևորագույն մի գործընթաց, ըստ որի՝ յուրաքանչյուր ամբիոնի ուսումնական և գիտական ծանրաբեռնվածությունը, որպես կանոն, պետք է կազմի նվազագույնը 5 հաստիքային միավոր: Այդ կարգում հստակ նշվում է յուրաքանչյուր հաստիքային 5 և ավել միավորների դեպքում դասախոսների տարակարգերի համամասնությունը, որով էլ առաջնորդվում ենք մրցույթ հայտարարելիս:

Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տրվում է առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում, համալսարանի կայքում և փակցվում է հայտարարությունների ցուցատախտակներին՝ ընտրությունից առնվազն երկու ամիս առաջ: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների հանձնման ժամկետը: Դիմումները կարող են ներկայացվել հայտարարության հրապարակումից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Թեկնածուները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի գիտական խորհրդի քարտուղարություն են ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր, որոնց թվում առանձնանում է կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից մշակված «Դասախոսի որակավորման գնահատման հարցաթերթը»: Այն ընդգրկում է վերջին 5 տարիների ընթացքում թեկնածուի կատարած աշխատանքների ծավալը՝ ներառելով ինչպես ուսումնական, մեթոդական, գիտական, առկայության դեպքում՝ կլինիկական, վարչական, ինչպես նաև՝ հասարակական գործունեությունը: Հաշվի է առնվում նաև «Դասախոսը՝ ուսանողի աչքերով» հարցման արդյունքները: Հարցաթերթի լրացման արդյունքում հավաքած միավորները հիմք են հանդիսանում որակավորման հանձնաժողովի կողմից տրվող կարծիքի համար և կողմնորոշիչ են հատկապես մրցութային իրավիճակներում:

Որակավորման հանձնաժողովի նիստերում համապատասխան ֆակուլտետի գիտական քարտուղարի կողմից մանրամասն ընթերցվում է թեկնածուի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա կազմված տեղեկատվություն: Որակավորման հանձնաժողովի նախագահ՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս.Ա. Ավետիսյանի և հանձնաժողովի անդամների քննարկման արդյունքում տրվում է համապատասխան՝ դրական կամ բացասական կարծիք: Սակայն պետք է նշեմ, որ անգամ որակավորման հանձնաժողովի և համապատասխան ֆակուլտետի խորհրդի բացասական կարծիքը չի արգելում թեկնածությունը ընտրության դնել համալսարանի գիտական խորհրդի նիստում:

Ամբիոնի վարիչի ընտրության համար հրավիրված գիտական խորհրդի նիստն անցկացվում է «Ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» համապատասխան: Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքում թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է խորհրդի անդամների կեսից ավելին (գիտական խորհրդի կազմը ներկայացված է համալսարանի կայքում): Ընտրված թեկնածուի հետ ռեկտորը 3 օրվա ընթացքում կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում ամբիոնի վարիչի պաշտոնում՝ մինչև 5 տարի ժամկետով:

Այն ամբիոնների վարիչները, որոնք գիտության թեկնածուներ են, նրանց հետ պայմանագիր է կնքվում մինչև 3 տարի ժամկետով: Այն հետապնդում է մեկ նպատակ՝ խթանել ամբիոնի վարիչի, ինչու ոչ՝ նաև ամբիոնի դասախոսական կազմի հետագա գիտական գործունեության ակտիվացումը:

Մինչ օրս այդ գործընթացին մասնակցել են 30՝ ինչպես բուհական, այնպես էլ հետբուհական և շարունակական կրթության ամբիոններ:

«Աստված մի արասցե՝ պատերազմ հարկադրվի մեզ, յուրաքանչյուրս նորից զինվոր ենք»

ԵՊԲՀ պրոռեկտոր, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանի հետ իմ հանդիպումը երկու նպատակ էր հետապնդում: Նախ՝ շնորհավորել նրան ՀՀ ՊՆ «Դրաստամատ Կանայան» գերատեսչական մեդալով պարգևատրվելու առիթով, ապա՝ խնդրել ներկայացնել այն նորույթները, որոնց մասին վերջերս որոշումներ են կայացվել կենտրոնական մեթոդական հանձնաժողովում:

Երբ Հայոց բանակի ստեղծման 20-ամյակի առիթով բժշկական համալսարանում կայացած հանդիսավոր արարողության ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով Ս. Ավետիսյանը արժանացավ ՀՀ պաշտպանության նախարարության «Դրաստամատ Կանայան» գերատեսչական մեդալի, ցավով պետք է նշեմ, որ պարգևատրման պահին տարակուսեցի. ի՞նչ առիթով է զինվորական պարգևի արժանանում իմ կարծիքով այս բնագավառի հետ առնչություն չունեցող Սամվել Ավետիսյանը:

Հետո պիտի պարզեի, որ նա ոչ միայն մասնակցել է Արցախյան ազատամարտին, այլև եղել ռազմական գործողությունների կիզակետում, հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ ընդամենը մեկ օրվա ընթացքում երեք անգամ ճակատագիրը խնայել է նրան՝ զերծ պահելով մահաբեր գնդակի հարվածից:

Հավանաբար նախախնամությունը հանուն նրա անմայր մեծացող Նարեկ որդու էր իր հովանու ներքո առել վերջինիս հորը, չցանկանալով կրկնակի ճակատագրական հարվածով կոտրել նրա վիրավոր սիրտը: Անիմանալի են Արարչի որոշումները, բայց որ ստույգ մահվան հետ դեմ հանդիման է կանգնել մի քանի անգամ և վերադարձել ծանր հիշողություններով՝ փաստ է, հիշողություններ, որոնց մասին դժվարությամբ է խոսում, հիշողություններ, որոնք մինչև այսօր տանջում են նրան: Ես մի քանի անգամ փորձեցի մեր խոսակցությունը տանել պատերազմի մասին պատմելու ընդունված հունով, բայց զգացի, որ պատերազմը՝ իր ծանր, դժոխային պատկերներով այնպես է նստած նրա մեջ, որ անհնար է առանց ցավեցնելու նրան ներքաշել այն ծանր օրերի գիրկը, որոնց մասին արտաքուստ ամուր, առնական, հզոր տղամարդը առանց ծանր ապրումների չի կարողանում խոսել: Սկսվող դեպքերի նկարագրությունն ընդհատվում էր «...Ես այս մասին չեմ սիրում խոսել» ընդգծված տխուր երանգով ասված խոսքով: Արտաշատի շրջանի Բաղրամյան գյուղի «Գարեգին Նժդեհ» ջոկատի բժշկի հանդիպումները նախկին ազատամարտիկների հետ միշտ ավարտվում են որոշակի մտահոգությունների բացահայտմամբ՝ պատշաճ ուշադրության չի արժանանում տղաներից որևէ մեկի հիշատակը, համապատասխան օգնություն չի ցուցաբերվում իրենց զոհված ընկերոջ ընտանիքին...

«Լսել եմ, որ ձեր զոհված ընկերոջ ընտանիքին երկար ժամանակ նյութական և բարոյական աջակցություն եք ցուցաբերել»... Առանց սպասելու խոսքիս ավարտին ասաց. «Մեծ բան չէ, մեզանից յուրաքանչյուրը կարող էր լինել նրանց փոխարեն: Պատերազմում չզոհվածներս պարտավոր ենք ոչ միայն հիշել նրանց, ովքեր նվիրաբերեցին ամենաթանկը՝ իրենց կյանքը, այլև ուշադիր ու հոգատար լինել նրանց զավակների հանդեպ, այն մարդկանց հանդեպ, ովքեր կորցրին առողջությունը, որի արդյունքում հաճախ ճակատագրեր խեղվեցին...»:

Որքան էլ չէր ստացվում կապակցված հիշողությունների շարանը ներկայացնելը, այնուամենայնիվ նրան ցնցած մի քանի դեպք ներկայացրին դժոխային այն պատկերը, երբ բժիշկը մասնակցել է գերիների, ազատամարտիկների, զոհվածների դիակների փոխանակմանը...

Ամփոփիչ խոսքն այնուամենայնիվ հնչեց այսպես. «Ինչքան էլ ծանր՝ համոզված եմ, Աստված մի արասցե՝ պատերազմ հարկադրվի մեզ, յուրաքանչյուրս նորից զինվոր ենք»:

Թեև դժվար էր այս պաթետիկ վերջաբանից հետո անցնել գործնական խոսակցության, այնուամենայնիվ պետք է իրագործեի հանդիպմանս երկրորդ նպատակադրումը՝ խնդրելով ընթերցողին ներկայացնել ուսումնական գործընթացի կատարելագործմանը նպաստող վերջին որոշումները:

Մեզ հուզող հարցերը պարզաբանում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը

- Ակնհայտ է, որ վերջին երկու տարիներին բավականին փոփոխություններ են տեղի ունենում, որոնք միտված են ուսումնական գործընթացի բարելավմանը: Որքան ինձ հայտնի է, վերջերս կենտրոնական մեթոդական հանձնաժողովը քննարկել է մագիստրատուրայի ուսուցման 1-ին տարում քննությունների բանավոր կերպի կիրառման վերաբերյալ հարցը:

Բացի այդ կարևորվել է քննական գործընթացում 51 ճիշտ պատասխանի դեպքում դրական գնահատականի ձևավորումը:

Եվ, վերջապես, քննարկվել է ամառային պրակտիկայի անցկացման համար նախատեսված նոր հարցաթերթիկների ձևակերպման հարցը:

Խնդրում եմ, վերոնշյալ քննարկումների արդյունքում կայացրած որոշումների մասին տեղեկացնել մեր ընթերցողներին:

- Այս հարցերի շարքում ես առավել կարևորում եմ այն հանգամանքը, որ մենք սեպտեմբերից որոշեցինք անցնել դրական գնահատականի ձևավորման սանդղակի իջեցման, որը նշանակում էր 45 ճիշտ պատասխանի դեպքում գնահատել դրական՝ «5» գնահատականը: Այս սեպտեմբերից մենք վերադառնում ենք նախկինին՝ 51 ճիշտ պատասխանի դեպքում դրական գնահատականի ձևավորմանը, այլևս հետ չիջնելու պայմանով: Առաջ դրական գնահատականի համար հիմքը 51 ճիշտ պատասխանն էր, երկրորդ մարման ժամանակ իջնում էինք մինչև 40: Հետո 51-ը դարձրինք 45, սեպտեմբերից դարձրել ենք 51 և այլևս չի իջնելու: Այս առնչությամբ կարևորն այն է, որ այն մտավախությունները, որ ունեինք նախկինում, այլևս չկան, որովհետև, նոր կարգի համաձայն, մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտք ունենալու դեպքում ուսանողը չի հեռացվում համալսարանից: Այս խնդիրը ծագեց, երբ որ հավատարմագրման գործընթացի հարցն առաջացավ, և ակնհայտ էր, որ մեզ հավատարմագրողները անպայման մեզ կտան այն հարցը, թե եթե ընդհանրապես աշխարհում ընդունված է, որ 50 տոկոս+1-ի դեպքում է գնահատականը դրական հաշվվում, ապա բացատրեք խնդրեմ, թե ինչու եք 45-ը հիմք ընդունել դրական գնահատականի համար:

Մագիստրատուրան՝ անկախ մասնագիտությունից, բոլոր ֆակուլտետներում 2 տարի է, և առաջին տարվա ավարտին՝ ամառային քննաշրջանում, հիմնական մասնագիտական առարկաներից ուսանողները հանձնում են բանավոր քննություն: Եւ այստեղ արդեն գնահատականի կազմման գործընթացը լինելու է հետևյալ կերպ՝ ուսանողը 2 կիսամյակներում տվյալ առարկայից, ասենք օրինակ՝ ներքին հիվանդությունից հանձնելու է հարցումներ գրավոր թեստային եղանակով, դրանց հիման վրա ստեղծվելու է տարեկան գնահատական, ոչ թե կիսամյակային, այլ՝ տարեկան, այսինքն՝ 2 կիսամյակների արդյունքում, հետո նա դրանով մտնելու է բանավոր քննության, բանավոր քննության ժամանակ ստացած գնահատականից և տարեկան գնահատականից դուրս է բերվելու միջին թվաբանական, ինչպես որ կատարվում է պետական քննության ժամանակ և ամբողջացվելու է վերջնական արդյունքը: Մենք գտնում ենք, որ բանավոր քննության մուտքը մագիստրատուրա այս կերպով փաստարկված է և համոզված եմ, որ սա ուսանողների կողմից կընդունվի:

Իկ այժմ՝ պրակտիկայի հարցում կիրառվող նորույթը, վերաբերում է ուսանողների ամառային պրակտիկայի հարցաթերթիկների փոփոխված տարբերակներին:

Ամռանը ունենք 12 տեսակի ուսումնաարտադրական պրակտիկա: Այն իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջացել ԿՄՀ-ի կողմից հաստատելու հարցաթերթիկները: Հարցաթերթիկները կթարգմանվեն ռուսերեն, անգլերեն լեզուներով և օտարերկրացի ուսանողներն իրենց երկրում պրակտիկան անցնելիս կներկայացնեն համալսարանի կողմից հաստատված հարցաթերթիկները, որոնք, ըստ էության, կփոխարինեն նախկին օրագրերին, որոնք լրացնում էին ուսանողները պրակտիկայի ավարտին, ըստ էության, հնարավորություն չտալով պատկերացում կազմել, թե ի՞նչ է սովորել ուսանողը տվյալ պրակտիկայի ընթացքում, ի՞նչ հմտությունների է տիրապետում:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ 12-ՐԴ ԳՐՔԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Երևան, ապրիլի 22՝ առավոտից մինչև ուշ գիշեր...

Ապրիլի 22-ին, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հնագույն ձեռագրերի թանգարան-ինստիտուտի՝ Մատենադարանի առջև Երևանը հռչակվեց 2012 թ. գրքի 12-րդ համաշխարհային մայրաքաղաք: Շքեղ հանդիսությամբ գրքի 2011-ի մայրաքաղաք Բուենոս Այրեսի քաղաքապետ Մաուրիցիո Մակրին տիտղոսը փոխանցեց Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին: Բացման արարողությանը ներկա էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, վարչապետ Տիգրան Սարգսյանը, օտարերկրյա պատվիրակությունների ղեկավարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ և այլոք:

Ելույթների ընթացքում Մատենադարանից մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա աշխարհի գործող19 այբուբենների տառերից հավաքվեց խորհրդանշական «Ամրագրիր քո ապագան» մետաղական քանդակը, որը դեպի վեր քայլող մարդն է, ով գնում է դեպի ապագան:

Միջոցառմանը ելույթ ունեցան արգենտինյան տանգոյի վարպետներ, 2013-ի գրքի համաշխարհային մայրաքաղաք Բանգկոկից ժամանած ազգագրական և Հայաստանի պարի պետական համույթները:

Միջոցառումը եզրափակվեց եռաչափ գրաֆիկայով պատրաստված ներկայացմամբ և շքեղ հրավառությամբ:

Երևանն այդ պատվավոր տիտղոսը կրելու է ուղիղ մեկ տարի:

Ի դեպ՝ Երևանի Ազատության հրապարակում նույն օրը կայացավ իտալացի աշխարհահռչակ տենոր Անդրեա Բոչելլիի համերգը, ով Հայաստանում էր «Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում:

Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (Մարչելո Ռոտայի ղեկավարությամբ), Հայաստանի պետական կամերային երգչախմբի և «Հովեր» կամերային երգչախմբի հետ համատեղ բացօթյա համերգը իսկական տոն դարձավ երևանցիներիս համար:

Ս. Թ.

1922 թվական, մարտի 15
Բացվեց Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը

Առաջին ամբիոնների ստեղծման պատմությունը

1922 թ. մարտին հիմնադրվում է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, որի բացման նախապատմությունը մանրամասն ներկայացրել ենք «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» նախորդ թողարկման մեջ: Ֆակուլտետի դեկան է նշանակվում առողջապահության հմուտ կազմակերպիչ, բժիշկ Սպանդարատ Կամսարականը: Ուսումնական գործընթացը կազմակերպվում էր մեծ դժվարություններով. դասախոսությունների ու գործնական պարապմունքների համար չկային լսարաններ, լաբորատորիաներ, կլինիկական հիվանդանոցներ, բժշկական սարքավորումներ ու գործիքներ, դասագրքեր, իսկ պրոֆեսորադասախոսական կազմը բաղկացած էր ընդամենը 6 հոգուց:

Հաշվի առնելով, որ բժշկական դպրոցի սովորողների թիվն անհամեմատ փոքր էր, համալսարանի խորհրդի որոշմամբ 1922թ. ամռանը բժշկական ֆակուլտետում կատարվում է լրացուցիչ ընդունելություն:

Բժշկական ֆակուլտետի համար սկզբնական շրջանում ուսումնական բազա է դառնում անատոմաֆիզիալոգիական ինստիտուտը, որը տեղակայված էր նվազագույն հարմարություններից զուրկ մի խղճուկ շենքում: Այստեղ մի կերպ տեղավորված էին նորմալ անատոմիայի, ֆիզիալոգիայի և հյուսվածաբանության ամբիոնները: Ախտաբանական անատոմիայի ամբիոնը ժամանակավորապես տեղավորվում է քաղաքային 2-րդ հիվանդանոցի հերձարանում, իսկ ֆարմակոլոգիայի ամբիոնը՝ քաղխորհրդի մշակույթի տան սենյակներից մեկում:

1922-27 թվականների ընթացքում հիմնականում ավարտվեց ինչպես տեսական, այնպես էլ կլինիկական ամբիոնների կազմակերպումը: Ամբիոնների հիմնադրումը կատարվեց ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար՝ կապված ուսումնական պլանի իրագործման հետ: Նախ կազմակերպվեցին առաջին կուրսում դասավանդվող առարկաների ամբիոնները, իսկ այնուհետև, հաջորդ տարիների ընթացքում, նաև՝ մյուսները:

1922թ. հիմնադրվեցին նորմալ անատոմիայի, հյուսվածաբանության, անօրգանական քիմիայի, լեզուների, 1923-ին՝ կենսաքիմիայի, կենսաբանության, մանրէաբանության, ֆիզիալոգիայի, ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի, ընդհանուր վիրաբուժության, 1924-ին՝ ախտաբանական անատոմիայի, ախտաբանական ֆիզիալոգիայի, ֆարմակալոգիայի, 1925-ին՝ օպերատիվ վիրաբուժության, ֆակուլտետային թերապիայի, աչքի հիվանդությունների, մանկաբարձության և գինեկալոգիայի, 1926-ին՝ մաշկավեներական հիվանդությունների, ընդհանուր հիգիենայի, նյարդային հիվանդությունների, մանկաբուժության, վարակիչ հիվանդությունների, հոսպիտալ թերապիայի, 1927-ին՝ դատական բժշկության և 1928-ին՝ հոսպիտալ վիրաբուժության ամբիոնները:



1922-30թթ. բժշկական ֆակուլտետի ուսանողների համար հրատարակվել է 17 դասագիրք, որոնցից մի քանիսն ապակետիպ, ոչ մեծ տպաքանակով: Մայրենի լեզվով առաջին դասագիրքը գրեցին և 1922-ին հրատարակեցին Վ. Արծրունին, և Ա. Հակոբյանը:

Ա. Հակոբյանը 1922թ. հրատարակում է «Մարդու նորմալ ֆիզիալոգիայի» դասագիրքը, իսկ Վ. Արծրունին՝ «Մարդու անատոմիայի» 1-ին պրակը՝ «Ոսկրաբանությունը»:

1922թ. բժշկական ֆակուլտետ ընդունվեց ընդամենը 122 դիմորդ: 1930-ին բոլոր կուրսերում կար ընդամենը՝ 270 ուսանող:

Բժշկական ֆակուլտետն իր գոյության ընթացքում տվեց ընդամենը 136 բժիշկ, այդ թվում՝ 1928-ին՝ 33, 1929-ին՝ 29, 1930-ին՝42:

Ինչպես առաջին, այնպես էլ հետագա տարիների շրջանավարտներից շատերը դարձան անվանի գիտնականներ ու առողջապահության կազմակերպիչներ:

Հետագա տարիներին համալսարանի համապատասխան ֆակուլտետների հիման վրա ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ: Բժշկական ֆակուլտետի բազայի վրա 1930-ին ստեղծվեց Երևանի պետական բժշկական ինստիտուտը, որը դարձավ Հայաստանում բժշկական կադրերի պատրաստման իսկական դարբնոց:

Եթե 1930թ. սկզբին բժշկական ֆակուլտետի առաջին կուրսում կար ընդամենը 79 ուսանող, իսկ բոլոր կուրսերում միասին վերցրած՝ 270, ապա 1930-31 ուստարում նորաստեղծ բժշկական ինստիտուտի առաջին կուրսում սովորում էր 163 ուսանող:

Բժշկական ինստիտուտի առաջին ռեկտորն էր (դիրեկտոր) Հ.Գ.Հովհաննիսյանը, որը համալսարանի ռեկտորն էր 1922-30 թթ. և ուներ բուհի ղեկավարելու մեծ փորձ և հմտություն: Մինչև 1931թ. բժշկական ինստիտուտն ուներ միայն բուժպրոֆիլակտիկ ֆակուլտետ, իսկ 1931-32 ուստարում բացվեց նաև սանիտարահիգիենիկը:

1922 թվական: 90 տարի առաջ բացվեցին

Նորմալ անատոմիայի ամբիոն

Անատոմիական հետազոտություններ Հայաստանում կատարվել են դեռևս շատ վաղ անցյալում, իսկ նրա զարգացումը պայմանավորված է Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետում Վահան Արծրունու նախաձեռնությամբ հիմնադրված անատոմիայի ամբիոնում կատարվող աշխատանքներով: Գոյության առաջին տարիներին ամբիոնը տեղավորված էր 3 փոքր սենյակներում: Չկային ուսումնական ձեռնարկներ և հայերեն լեզվով դասագրքեր: 1923թ. հրատարակվեց Վահան Արծրունու՝ հեղինակած անատոմիայի առաջին դասագիրքը, 1924-ին ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական բառարանը, որը հայկական բժշկագիտական տերմինաբանության զարգացման հիմքը հանդիսացավ:

Վ. Արծրունու նախաձեռնությամբ ամբիոնին կից ստեղծվել է անատոմիական թանգարան, որը հետագայում կոչվել է նրա անունով: Թանգարանը կարճ ժամանակում հարստացել է անհրաժեշտ ցուցանմուշներով և հետագայում մեծ դեր է ունեցել ուսանողների ուսուցման գործում: Մանկավարժական աշխատանքները, այդ թվում՝ դասախոսություններն ու գործնական պարապմունքները ավելի բարձր մակարդակի հասան, երբ 1925-ին Ալեքսանդր Թամանյանի նախագծով կառուցվեց անատոմիկումի մասնաշենքը:

Ամբիոնում ուսուցումը ներկայումս իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով՝ ընդհանուր բժշկության և ստոմատոլոգիական ֆակուլտետների III և IV կիսամյակներում: Գործնական պարապմունքներն իրականացվում են մուլյաժների, ուսումնական ֆիլմերի, համակարգչային ծրագրերի, դիակային թաց պատրաստուկների և դիակային նյութի կիրառմամբ: Գիտելիքների ստուգումը կատարվում է թեստային հարցումով՝ համալսարանում ընդունված կարգի համաձայն:

Ամբիոնը ղեկավարել են՝ Վ.Մ. Արծրունին, Մ. Պ. Այվազյանը,Հ. Մ. Հակոբյանը, Լ. Ք. Մանուկյանը, Հ.Գ. Ղազարյանը, Լ.Ա. Մանուկյանը, Ա.Ս. Կանայանը, Գ.Պ. Քյալյանը, Կ. Մ. Բարոյանը:

Հյուսվածաբանության ամբիոն

Ամբիոնի առաջին վարիչը եղել է Գ.Ս. Հայրապետյանը: Սակայն ամբիոնի իրական հիմնադիրը կարելի է համարել Հայկանդուխտ Չախմախչյանին, ով երկու անգամ գործուղվել է Գերմանիա և ամբիոնը կահավորել անհրաժեշտ սարքավորումներով: Ի դեպ՝ գերմանացի հետազոտողների հետ Հ. Չախմախչյանը մասնակցել է Արարատի գագաթի նվաճմանը: Այնուհետև Հ.Գ. Եփրեմյանից և Կ.Հ. Կարապետյանից հետո, 28 տարի ամբիոնը ղեկավարել է պրոֆեսոր Արտաշես Ազնաուրյանը: Ներկայումս ամբիոնի վարիչը պրոֆեսոր Կարմեն Սահակյանն է:

Հյուսվածաբանություն առարկան դասավանդվում է ընդհանուր բժշկության և ստոմատոլոգիական ֆակուլտետների 2-րդ կուրսի ընթացքում՝ III-IV կիսամյակներում:

Ծրագրով նախատեսված թեմատիկ նյութն ուսանողներին մատուցվում է դասախոսությունների, գործնական պարապմունքների, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքների ձևով: Ուսումնական գործընթացի արդյունավետության և առարկայի նկատմամբ հետաքրքրության զարգացման նպատակով ամբիոնում անցկացվում են նաև ուսանողական կոնֆերանսներ, որոնց մասնակիցները հյուսվածաբանության գիտական խմբակի ուսանողներն են:

Վերջին տարիների ընթացքում ամբիոնում հրատարակվել են հայերեն լեզվով «Ընդհանուր հյուսվածաբանություն» և «Մասնավոր հյուսվածաբանություն» դասագրքերը: Հյուսվածաբանության ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ թեստային հարցումներին և քննություններին պատրաստվելու համար:

Ամբիոնն ակտիվորեն մասնակցում է Հայաստանի մորֆոլոգների ասոցիացիաների նիստերին, որի նախագահը պրոֆ. Ա.Վ. Ազնաուրյանն է:

Բժշկական ինստիտուտի առաջին չորս ամբիոնները

Բժշկական քիմիայի ամբիոն

1922-ին Երևանի պետական համալսարանի անօրգանական քիմիայի ամբիոնի հիման վրա նորաստեղծ բժշկական ֆակուլտետի համար ստեղծվեց ընդհանուր քիմիայի ինքնուրույն ամբիոն: Ամբիոնի մեջ միավորվում էին ընդհանուր և անալիտիկ քիմիայի դասընթացները: Ամբիոնի հետագա զարգացման համար կարևոր փուլ հանդիսացավ բժշկական ֆակուլտետի անջատումն իբրև ինքնուրույն ինստիտուտ, այնուհետև՝ բժշկական համալսարան: Ամբիոնը վերանվանվել է. 1967-ին՝ անօրգանական, անալիտիկ և կլինիկական քիմիայի, 1982-ին՝ ընդհանուր քիմիայի, 1993-ին՝ ընդհանուր և կենսօրգանական քիմիայի, 2008-ին՝ բժշկական քիմիայի: Ամբիոնը ղեկավարել են՝ Ս.Պ. Ղամբարյանը,Հ.Հ. Ակունյանը, Ա.Լ. Մնջոյանը, Ա.Ք. Հարությունյանը, Է.Ե. Մխեյանը,Գ.Ա. Չուխաջյանը, Մ.Մ. Մելքոնյանը:

Ամբիոնի հիմնադիրն է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, Հայաստանում օրգանական քիմիայի հիմնադիր Ս.Պ Ղամբարյանը (1879-1948թթ.): Նրա ջանքերով են կազմակերպվել և նրա կողմից ղեկավարվել օրգանական քիմիայի ամբիոններ նաև համալսարանում, գյուղատնտեսական, պոլիտեխնիկական և անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտներում:

ԵՊԲՀ-ի բժշկական քիմիայի ամբիոնը գիտական սերտ կապերի մեջ է ԵՊԲՀ գիտական կենտրոնի, ՀՀ գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի հետ:

Օտար լեզուների ամբիոն

Լատիներեն լեզվի դասավանդումը սկսվել է 1922–ից՝ Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում: Հետագայում, բժշկական ինստիտուտի հիմնադրման պահից սկսվում է օտար լեզուների ուսուցումը օտար լեզուների ամբիոնում: Լատիներեն լեզվի ամբիոնը ձևավորվել է 1938 թվականին: Ամբիոնը ղեկավարել են Պ. Հ. Սոտնիկյանը, Գ. Հ. Գյանջուցյանը, Հ. Գ. Մակարյանը: Հիշյալ երկու ամբիոնների հիմքի վրա 1955թ. հիմնադրվել է լատիներենի և օտար լեզուների ամբիոնը, որը 1987թ. վերանվանվել է լատիներենի և օտար լեզուների ու բժշկական տերմինաբանության ամբիոն: Սկզբում այն ղեկավարել է Գ.Հ. Գյանջուցյանը, ապա՝ Պ.Հ.Սոտնիկյանը, Հ.Թ.Առաքելյանը, ներկայումս՝ Վ.Մ.Բալաբանյանը:

Ամբիոնի աշխատանքի ուղղություններն են՝ լատիներենի և բժշկական տերմինաբանության ուսուցումը երկլեզվաբանության մեթոդի միջոցով, լատիներենի և օտար լեզուների ինտեգրված մեթոդի ուսուցումը, օտար լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառում, լեզուների ուսուցմամբ մշակութային, հումանիտար և հայրենասիրական դաստիարակությունը:

Ամբիոնը կազմակերպել է համամիութենական կոնֆերանսներ: Բացի այդ ամբիոնի աշխատակիցների հոդվածները ոչ միայն տպագրվել են հեղինակավոր արտասահմանյան ամսագրերում, այլև դասախոսները զեկուցումներով հանդես են եկել Կուրսկում, Սամարայում, Սանկտ Պետերբուրգում, Կանադայում և այլուր:

2000-ից սկսած ամբիոնի անգլերեն լեզվի դասախոսներ Ն. Լ. Նազարեթյանի և Մ. Ն. Բիշարյանի ջանքերով համալսարանի հարյուրավոր աշխատակիցներ անգլերեն լեզվի իրենց գիտելիքներն են կատարելագործել Անգլիայում՝ հետագայում մեր արտասահմանցի ուսանողներին անգլերեն լեզվով կրթություն տալու համար:

2005-ին ամբիոնին միացավ նաև ռուսաց լեզվի ամբիոնը: Արդեն 7 տարի է, ինչ ամբիոնում դասավանդվում է նաև իսպաներեն լեզու: Ամբիոնում կազմակերպվում են պարապմունքներ ասպիրանտների, կլինօրդինատորների և նախապատրաստական ֆակուլտետի ուսանողների համար:

ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ERNST VON BERGMANN KLINIKUM

Վերապատրաստման ծրագիր Գերմանիայի Պոտսդամ քաղաքի «Էռնստ վոն Բերգման» կլինիկայում

Միջազգային համագործակցություն խորագիրը շարունակելով՝ այս անգամ մեր ընթերցողին ենք ներկայացնում Գերմանիայի Պոտսդամ քաղաքի «Էռնստ վոն Բերգման» կլինիկայում տեղի ունեցած մեր բժիշկների վերապատրաստման մասին տեղեկատվությունը:

2009 թվականից ի վեր Երևանի պետական բժշկական համալսարանը համագործակցում է Գերմանիայի Պոտսդամ քաղաքի «Էռնստ վոն Բերգման» կլինիկայի հետ, որը փորձառու անձնակազմով համալրված և նորագույն բժշկական սարքավորումներով հագեցած կլինիկական բազմապրոֆիլ հիվանդանոց է: Սույն համագործակցության շրջանակներում համալսարանի բժիշկները և բուժանձնակազմը մասնակցում են տասներկու շաբաթ տևողությամբ վերապատրաստման համալիր դասընթացների վերոհիշյալ կլինիկայում:

Սրտաբանության, ռադիոլոգիայի և գաստրոէնտերոլոգիայի ոլորտներում որակավորման բարձրացման նշյալ դասընթացներից հետո ԵՊԲՀ մասնագետները և կլինիցիստները իրենց ձեռք բերած փորձը ներդնում են Հայաստանում:

Սեդա Շեկոյան *(սրտաբան, անհետաձգելի սրտաբանության ամբիոնի դոցենտ)* - Իմ տեսած նորությունները, որոնք հիմնականում կապված են պրակտիկ աշխատանքների հետ, չափազանց հետաքրքիր էին: Մասնակցությունս վերապատրաստմանը բավականին արդյունավետ էր:

2 ամսվա ընթացքում ես վերապատրաստվել եմ Գերմանիայի լավագույն կլինիկաներից մեկում՝ Պոտսդամում գտնվող Ernst von Bergmann հիվանդանոցի սրտաբանության և ֆունկցիոնալ դիագնոստիկայի բաժանմունքներում:

Այս վերապատրաստումից շատ տպավորված եմ:

Հիվանդանոցը զինված էր ամենաժամանակակից տեխնիկայով: Օրվա ընթացքում հիվանդների հոսքը չափազանց շատ էր՝ շնորհիվ բժշկական պարտադիր ապահովագրության, ինչը հնարավորություն տվեց 2 ամսվա ընթացքում տեսնել այնքան անգիոգրաֆիաներ, 24-ժամյա ԷՍԳ հոլտեր հետազոտություններ, օրթոարտրիկ (Tilt test) հետազոտություններ, մարմնի պլետիզմոգրաֆիաներ, սպիրոմետրիաներ, վելոէրգոմետրիաներ և էխոսրտագրություններ:

Շաբաթվա 1 օրը պրոֆեսորը բաց դռների օր էր ունենում պոլիկլինիկայում, և դա ևս հնարավորություն էր տալիս առնչվել սրտային տարբեր պաթոլոգիաներով հիվանդների հետ: Մասնակցել եմ նաև սրտաբանական բաժնի համայցերին:

Հուսով եմ, որ մեզ մոտ՝ Հայաստանում ևս կգործի պարտադիր բժշկական ապահովագրությունը, ինչը հնարավորություն կտա մեր ազգաբնակչությանը ժամանակին ստանալ իրենց այդքան անհրաժեշտ բուժօգնությունը:

Իմ տեսած տեխնիկական նորությունները և բուժման նոր մեթոդներին ծանոթանալը ոչ միայն կարևոր էին իմ պրակտիկ աշխատանքի համար, այլ նաև հնարավորություն են տալիս իմ ուսանողներին ներկայացնել Եվրոպայում կիրառվող բուժման և ախտորոշման նորագույն մեթոդները:

Լիլիթ Անտոնյան *(սրտաբանության և ինտենսիվ թերապիայի կլինիկայի բժիշկ-սրտաբան)* - Պատմել իմ տպավորությունների մասին՝ նշանակում է ոչինչ չասել, որովհետև դա պետք է տեսնել: Տեսնել՝ սկսած հիվանդանոցի կատարյալ մաքրությունից և կարգ ու կանոնից, վերջացրած տեխնիկական հագեցածությամբ և բժիշկների կազմակերպված և թիմային աշխատանքով:

Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես հիվանդները հիվանդանոց էին բերվում ոչ միայն շտապօգնության մեքենայով, այլ նաև ուղղաթիռով: Ամեն ինչ կազմակերպված էր իդեալական:

Տպավորիչ էր մասնագիտական բարձր մակարդակը: Կլինօրդինատորը հինգ տարիների ընթացքում

հասցնում էր հստակ տիրապետել բոլոր գործնական հմտություններին, և յուրաքանչյուր սրտաբան կատարում էր կորոնարոգրաֆիա, ստենդտավորում կամ փեյսմեյկերների, ICD-ների իմպլանտացիա կամ էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություն:

Առանձնահատուկ ուշադրության էր արժանի նաև բուժքույրերի աշխատանքը, ինչպիսի հոգատարությամբ և ինչպիսի ահռելի աշխատանք էին կատարում նրանք յուրաքանչյուր հիվանդի խնամքն ապահովելու համար: Վատ չէր լինի, եթե նմանատիպ փոխանակման ծրագրեր կազմակերպվեին նաև մեր բուժքույրերի համար, սովորելու շատ բան կունենային:

Ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում այն մարդկանց, առանց ում այս ամենը անհնարին կլիներ և նրանց շնորհիվ էր, որ ես Գերմանիայում ինձ զգացի այնպես, ինչպես տանը:

Եվ վերջում անպայման ուզում եմ ասել, որ ես հիացած եմ այդ երկրով, նրա ժողովրդով, նրանց հանգստությամբ և կազմակերպվածությամբ, ամենուրեք, ամեն ոլորտում տիրող կարգ ու կանոնով և ճշգրտությամբ:

Հովհաննես Կժդրյան *(անհետաձգելի սրտաբանության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., համալսարանական թիվ 1 կլինիկայի ընդհանուր և ինվազիվ սրտաբանության կլինիկա)* - Ես նույնպես մասնագիտական վերապատրաստում եմ անցել Պոտսդամի «Էրնստ Վոն Բերգման» կլինիկայում, ինտենսիվ թերապիայի բաժանմունքում:

Ընդունելությունը ջերմ էր, ինչպես վայել է եվրոպական քաղաքակրթությանը: Ընձեռված էին բոլոր հնարավորությունները՝ մասնագիտական անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու համար: Անձնակազմը ջերմ էր, սիրալիր, պատրաստակամ՝ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու, համագործակցության՝ տարբեր հարցերում: Ավելին, առ այսօր նամակագրական կապ եմ պահպանում անձնակազմի շատ անդամների հետ: Կցանկանայի կիսվել իմ որոշ տպավորություններով:

Նախ կառանձնացնեի կազմակերպական որոշ հարցեր, որոնք, ըստ իս, արժե քննարկել և ներդնել նաև մեր համակարգում.

• Կատարելության էր հասցված միջին բուժանձնակազմի աշխատանքը՝ մեկ հիվանդին՝ մեկ բուժքույր սկզբունքով: Ընդ որում, հիվանդի խնամքի հարցերով զբաղվում էր միայն բուժքույրը: Կրտսեր բուժանձնակազմի պարտականությունը միայն հիվանդասենյակի մաքրությունն էր:

• Առկա էր տվյալների կենտրոնացված, կատարյալ համակարգչային բազա: Հիվանդության պատմագիր կոչվածը ընդամենը հիվանդների տվյալների մուտ-

քագրումն էր համակարգիչ, որտեղ մուտք ուներ միայն բժշկական անձնակազմը: Նվազագույնի էր հասցված թղթաբանությունը: Ներբաժանմունքային կապը (հիվանդի լաբորատոր տվյալներ, հետազոտության արդյունքներ, խորհրդատվության հրավիրում) նույնպես ապահովվում էր համակարգչային բազայի միջոցով:

• Հիացնում էր ինտենսիվ թերապիայի բաժանմունքի բժիշկների պրակտիկ հմտությունների մակարդակը: Բժիշկները տիրապետում էին տարբեր մանիպուլյացիաների և հետազոտության գործիքային մեթոդների՝ կենտրոնական երակային կաթետերիզացիա, պերիֆերիկ զարկերակային կաթետերիզացիա, վերին շնչուղիների ինտուբացիա, բրոնխոսկոպիկ, գաստրոսկոպիկ, էխոսրտագրություն, սոնոգրաֆիկ հետազոտություն և այլն:

• Բաժանմունքը ուներ սեփական աշխատանքի ուղեցույցներ, արձանագրեր: Բժշկի աշխատասեղանին առկա էր հստակ գործելակարգ՝ կոնկրետ կլինիկական իրավիճակի համար:

• Բաժանմունքում բոլոր հիվանդներին ապահովվում էր պերիֆերիկ զարկերակային կաթետերիզացիա և ինվազիվ զարկերակային ճնշման մոնիթորինգ: Պետք է ասեմ, որ ինվազիվ Զ/Ճ շարունակական, անընդհատ այս մեթոդը արդեն ներդրվել և կիրառվում է թիվ 1 կլինիկայի անհետաձգելի սրտաբանության ինտենսիվ թերապիայի բլոկում:

• Ինտրաաորտալ կոնտրպուլսատորի կիրառում կարդիոգեն շոկերի ժամանակ, ինչի ներդրումը մեծ հնարավորություններ կընձեռի կարդիոգեն շոկերից մահացության նվազման հարցերում՝ մեր կլինիկայի ինտենսիվ թերապիայի բլոկում:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել և ողջունել Պոտսդամի կլինիկայի իմ գործընկերներին՝ միջբուհական հարցերով համակարգող՝ Դանիելա Պոկորնի, ԻԹՇ ղեկավար բժ. Սաբինա Յանդեր, բժիշկներ Մարկո, Սվեն, Ուղտե, Անդրե, Կենո:

Արամ Միրիջանյան *(վիրաբույժ)* - Իմ անցած վերապատրաստման կուրսը շատ արդյունավետ էր, քանի որ ես հնարավորություն ունեցա ծանոթանալ հիվանդների նախավիրահատական և հետվիրահատական վարման մոտեցումներին, ինչպես նաև տեսա բավականին շատ վիրահատություններ, որոնցից ինձ համար առավել հետաքրքիր և օգտակար էին լյարդի մասնահատումները, ենթաստամոքսային գեղձի վրա կատարվող վիրահատությունները և լապարասկոպիկ եղանակով կատարվող հաստ աղու մասնահատումները: Ուզում եմ նշել, որ պրոֆ. Վենիշի շնորհիվ ինձ հնարավորություն տրվեց մասնակցել Մյունխենում տեղի ունեցած գերմանացի վիրաբույժների ամենամյա կոնգրեսին, ընդ որում բոլոր ծախսերը հոգացել է գերմանական կողմը, ինչի համար հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը, հատկապես պրոֆ. Վենիշին: Շնորհակալություն եմ հայտնում ամբողջ կոլեկտիվին՝ իրենց հյուրընկալության և ուշադրության համար:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում պարոն Ուտցին և նրա տիկնոջը՝ այս ամենը կազմակերպելու, հովանավորելու, իրենց տանը հյուրընկալելու և Գերմանիայի նման առաջատար երկրում ինձ վերապատրաստման հնարավորություն տալու համար:

Սրբուհի Թարխանյան *(գաստրոենտերոլոգ)* - Ծանոթացել եմ բուժման ժամանակակից մեթոդներին: Հիվանդանոցն ուներ նորագույն տեխնիկայով հագեցած էնդոսկոպիկ բաժանմունք, որտեղ իրականացվում են ախտորոշիչ և բուժական բազմաթիվ միջամտություններ, որոնք մեր երկրում առայժմ չեն կատարվում: Եվ շատ կուզենայի, որպեսզի համապատասխան մասնագետների վերապատրաստվելուց հետո մենք ևս ունենայինք նման սարքավորումներով հագեցած բաժանմունքներ:

Վերապատրաստման ծրագիրը հիմք է դրվել BBD (Berliner Burger Danken) կազմակերպության և Բերգման կլինիկայի՝ մասնավորապես Ութս Ֆյերդերոյթերի և պրոֆեսոր Վեյնքեի ջանքերով:

Վերապատրաստման 3 ամիսների ընթացքում հնարավորություն է ընձեռվել բարելավել և կատարելագործել մասնագիտական գիտելիքներս: Գերմանացի կոլեգաները միշտ պատրաստակամ են եղել մանրամասնել բոլոր այն գործողությունները, որոնք կատարվում էին և ինձ համար նորություն էին, տրվել է համապատասխան գրականություն (իրենց անձնական գրադարանից), հնարավորություն է ստեղծվել մեկնելու իրենց հետ Լայպցիգ և մասնակցելու կայանալիք կոնֆերանսին: Այս ծրագրի շնորհիվ սովորել եմ կատարել լյարդի բիոփսիա, որն այսօր կատարվում է Հայաստանում:

Բացի մասնագիտական շփումից՝ որոշ բժիշկների հետ կապը շատ ավելի է մտերմացել, ստացել եմ հրավերներ՝ երեկոն գերմանական ընտանիքի ջերմ միջավայրում անցկացնելու, մոտիկից շփվելու, ծանոթանալու իրենց մշակույթի և ազգային արժեքների հետ:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել իմ գերմանացի գործընկերներին այս ամենի համար: Հուսով եմ և շատ ցանկանում եմ, որ ծրագիրը լինի շարունակական, քանի որ այն իսկապես ծառայում է ի նպաստ մեր երկրում բժշկության զարգացմանը:

Լիլիթ Սարգսյան *(«Մուրացան» համալսարանական համալիր, քիմիաթերապիայի կլինիկա, մանկական օնկոհեմատոլոգ)* - Ես նույնպես վերապատրաստվել եմ Գերմանիայում, իսկ ավելի կոնկրետ՝ Բեռլինի "Charite" համալսարանական հիվանդանոցի մանկական օնկոհեմատոլոգիայի բաժանմունքում: Պատիվ եմ ունեցել անձամբ շփվել համաշխարհային հեմատոլոգիայի կարկառուն դեմքերից մեկի՝ պրոֆեսոր Գյունտեր Հեն-

ցեյի հետ, որը ամբողջ աշխարհում հաջողությամբ կիրառվող լեյկեմիայի բուժման ծրագրերի հեղինակներից է:

Երկու ամիսների ընթացքում վայելել եմ նրա և բաժանմունքի մյուս բժիշկների բարեհաճ վերաբերմունքն ու փայլուն գիտելիքների հրավառությունը: Մասնակցել եմ ամենօրյա բժշկական քննարկումներին, բարդ դեպքերի վերլուծություններին, ոսկրածուծի տրանսպլանտացիայի աշխատանքներին, ինչպես նաև հաճախակի կազմակերպվող դասախոսություններին ու գիտական կոնֆերանսներին, որոնք չափազանց բարձր արդյունավետություն ունեին:

2009-ին մեր կլինիկայի ջանքերով Երևանում կազմակերպվել է կոնֆերանս, որին հրավիրվել են պրոֆեսորներ Հենցեն, Շտակելբերգը, Բորկհարդը և այլ մեծանուն գիտնականներ: Կապը նրանց հետ անընդհատ է: Պարբերաբար կլինիկական բարդ իրավիճակներում «online» խորհրդակցում ենք, լսում նրանց կարծիքը:

Ուզում եմ հայտնել իմ երախտիքի խոսքերը այս մեծանուն մարդկանց և հուսով եմ, որ դեռ կլինեն բազմաթիվ հանդիպումներ նրանց հետ:

Առանձին շնորհակալություն եմ հայտնում BBD հիմնադրամի նախագահ Ու.Ֆյերդերոյթերին և նրա տիկնոջը՝ Բ.Ռաֆֆին, որոնք հյուրընկալեցին ինձ այդ երկու ամիսների ընթացքում իրենց բնակարանում:

Վերապատրաստվածները իրենց խոսքն ավարտում էին երախտագիտական հղումներով առ այն մարդիկ ովքեր շատ ջերմ ընդունելության արժանացրին իրենց և ամեն կերպ աջակցեցին՝ օգնելով ցանկացած հարցում:

Թվարկումների շարքն սկսվում էր ծրագրի հովանավորների՝ Ուբս Ֆյերդերոյթերին նրա կնոջ՝ Բրիգիթ Ռաֆֆի անվամբ, շարունակվում սրտաբանության, անոթաբանության և կոնսերվատիվ ինտենսիվ թերապիայի կլինիկայի ղեկավար պրոֆեսոր Ֆրանց Խավեր Կլեբերով, դոկտոր Միշել Հոֆֆմանով, Մարիուս Վիլմանով...

TRAINING PROGRAM IN "ERNST VON BERGMANN" CLINIC IN POTSDAM, GERMANY

We're representing you the training of our doctors which took place in Potsdam, Germany. Since 2009 YSMU has been collaborating with Ernst Von Bergmann clinic in Potsdam which is multiprofile hospital equiped with modern medical equipment and experineced staff. Within the framework of this collaboration University doctors and the medstaff took part in complex trainings of 12 weeks in the above represented hospital.

After the trainings for increasing the quality in cardiology, radiology, gastroenterology shperes, The YSMU specialists and clinicists implemented their experience in Armenia.

The participants of the training are greatly thankful to people who encouraged and supported them so enthusiastically in any issue. They thank heartily Uts Foerderreuther and his wife Bigitte Raff-the sponsors of the program, Franz Xaver Kleber, Dr. Michaella Hoffman, Marius Willman, Daniela Pokorni, Sabina Yander, Marco, Sven, Andre, Kena. Also professors Venish, Gyuter, Hentsen, Shtakelberg and Borkhard.

The German translation of the full version of the article is available at www.ysmu.am.

ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ

ERNST VON BERGMANN KLINIKUM

Fortbildungsprogramm in der Klinik "Ernst von Bergmann" der Stadt Potsdam in Deutschland

Fortsetzend den Titel "Internationale Zusammenarbeit" stellen wir diesmal unseren Lesern die Information ьber die in der Klinik "Ernst von Bergmann" der Stadt Potsdam in Deutschland stattgefundene Fortbildung unserer Дrzte vor.

Seit 2009 arbeitet die Jerewaner Medizinische Universitдt mit der Klinik "Ernst von Bergmann" der Stadt Potsdam in Deutschland zusammen, das ein mit dem erfahrenen Personal vervollstдndigte und mit neusten medizinischen Ausstattungen gesдttigte klinische vielprofile Krankenhaus ist. Im Rahmen dieser Zusammenarbeit nehmen die Дrzte der Universitдt und die Дrzteschaft am zwцlfwochendauernden Ausbildungskomplexlehrgang in obenerwдhnter Klinik teil.

Nach dem angegebenen Lehrgang der Qualifikationserhцhung auf den Gebieten der Kardiologie, Radiologie und Gastroenterologie legen die Spezialisten der Jerewaner Staatlichen Medizinischen Universitдt und die Kliniker ihre erworbene Erfahrung in Armenien hinein.

Seda Schekoyan *(Kardiologe, Dozent des Lehrstuhls fьr Notfall-Kardiologie)*-Die Neuigkeiten, die ich gesehen habe und die meistens mit praktischen Arbeiten verbunden sind, waren sehr interessant. Meine Beteiligung an der Fortbildung war ziemlich effektiv.

Wдhrend zwei Monate habe ich in einer der besten Kliniken von Deutschland, in den Abteilungen der Kardiologie und Funktionelldiagnostik des Krankenhauses "Ernst von Bergmann" in Potsdam fortgebildet. Ich bin von dieser



Fortbildung sehr eingeprдgt.

Das Krankenhaus war mit der modernsten Technik gerьstet. Wдhrend des Tages war der Krankenstrom zu viel dank der verbindlichen medizinischen Versicherung, die die Mцglichkeit gab, wдhrend zwei Monate viele Angiographien, 24-Stunden Echokardiographien Holteruntersuchungen, Orthoarthrituntersuchungen (Tilt test), Kцrperplethysmographien, Spirometrien, Veloergometrien und Echokardiographien zu sehen.

Einen Tag in der Woche hatte der Professor den Tag der offenen Tьre in der Poliklinik und das gab auch die Mцglichkeit, mit den Kranken mit verschiedenen Kardiopathologien in Berьhrung zu kommen. Ich habe auch an den Visitenstunden der kardiologischen Abteilung teilgenommen.

Ich hoffe, dass die verbindliche medizinische Versicherung auch bei uns in Armenien funktionieren wird, die die Mцglichkeit unserer Bevцlkerung gibt, ihre notwendige дrztliche Hilfe rechtzeitig zu bekommen.

Meine gesehenen technischen Neuigkeiten und das Kennenlernen der neuen Behandlungsmethoden waren wichtig nicht nur fьr meine praktische Arbeit, sondern auch sie geben die Mцglichkeit, die in Europa anwendenden neusten Methoden der Behandlung und der Diagnose meinen Studenten vorzustellen.

Lilit Antonyan *(Дrztin-Kardiologe der Klinik fьr Kardiologie und Intensivtherapie)*- Ьber meine Eindrьcke zu erzдhlen, das bedeutet nichts zu sagen, weil man es sehen muss-die vollkommene Sauberkeit und die Ordnung des Krankenhauses, die technische Sдttignung und die organisierte Teamarbeit der Дrzte.

Es war interessant zu sehen, wie die Kranken ins Krankenhaus nicht nur mit dem Krankenwagen der Nothilfe, sondern auch mit dem Helikopter gebracht wurden. Alles war ideal organisiert.

Das berufliche hohe Niveau war eindrucksvoll. Wдhrend 5 Jahre schaffte der Assistenzarze alle praktischen Fertigkeiten

deutlich zu beherrschen, und jeder Kardiologe machte Koronarographie, Stenting oder Implantation der Pacemakers, ICD oder elektrophysiologische Untersuchung.

Besonders beachtenswert war auch die Arbeit der Krankenschwestern, mit welcher Sorgfalt und was fьr eine ungeheuere Arbeit machten sie fьr die Pflegschaft jedes Kranken. Es wдre nicht schlecht, дhnliche Austauschprogramme auch fьr unsere Krankenschwestern zu organisieren. Sie hдtten vieles zu lernen.

Ich spreche meinen herzlichen Dank den Menschen aus, ohne die das alles nicht mцglich wдre. Dank diesen Menschen fьhlte ich mich in Deutschland wie zu Hause. Zuletzt will ich unbedingt sagen, dass ich dieses Land, sein Volk, seine Ruhe und Organisiertheit, ьberall, auf jedem Gebiet beherrschende Ordnung und Prдzision bewundert bin.

Howhannes Kdzdryan *(Assistent des Lehrstuhls fьr Notfall-Kardiologie, Kandidat der medizinischen Wissenschaften, Allgemeines und invasives Kardiologieklinikum des Universitдtsklinikums Nummer 1)*- ich habe auch berufliche Fortbildung in der Klinik "Ernst von Bergmann" der Stadt Potsdam, in der Abteilung fьr intensive Therapie gehabt.

Der Empfang war herzlich, wie es der europдischen Zivilisation anstдndig ist. Zum Erwerben der notwendigen beruflichen Fertigkeiten waren alle Mцglichkeiten gegeben. Das Personal war herzlich, freundlich, hilfsbereit, die notwendige Information zur Verfьgung zu stellen und zur Zusammenarbeit in verschiedenen Fragen. Noch mehr, ich stehe bis heute mit vielen Mitgliedern des Personals in Verbindung. Ich mцchte mich einige meine Eindrьcke teilen.

Zuerst wьrde ich einige organisatorische Fragen absondern. Meiner Meinung nach gilt es diese Fragen zu diskutieren und auch in unser System einzufьhren:

- die Arbeit des mittleren Personals war zur Vollkommenheit gebracht-nach dem Prinziip eine Krankenschwester einem Kranken. Dabei beschдftigte sich nur eine Krankenschwester mit den Fragen der Krankenpflege. Die Aufgabe des unteren Personals war nur die Sauberkeit des Krankenzimmers,
- es gab eine konzentrierte, vollkommene Computerbasis der Daten. Die sogenannte Krankheitsgeschichte war insgesamt des Dateneinfьhren der Kranken ins Computer, wohin nur die Дrzteschaft Eingang hatte. Die Dokumentation war zu minimal gebracht. Die Verbindung in den Innenabteilungen (die Labordaten des Kranken, die Untersuchungsergebnisse, das Beratungseinladen) wurde auch durch die Computerbasis versorgt,
- mich begeisterte das Niveau der praktischen Fertigkeiten der Дrzte der Abteilung fьr intensive Therapie. Die Дrzte beherrschten verschiedene Manipulationen und Gerдtenmethoden der Untersuchung- zentrale Aderkatheterisation, periphere Arterienkatheterisation, Intubation der oberen Atemwege, Bronchoskopie, Gastroskopie, Echokardiographie, Ultraschalluntersuchung und so weiter,
- die Abteilung hatte Hinweise und Protokolle eigener Arbeit. Auf dem Tisch des Arztes gab es deutliche Handlungsweise fьr die konkrete klinische Situation,
- in der Abteilung waren alle Kranken durch Monitoring peripherer Arterienkatheterisation und invasives Arteriendrucks versorgt. Ich muss sagen, dass diese ununterbrochene, kontinuierliche Methode des invasiven Arteriendrucks schon im Block der intensiven Therapie fьr Notfall-Kardiologie der Klinik Nummer 1 eingefьhrt und angewandt ist,
- die Anwendung intraaortales Antipulsators wдhrend der kardiogenen Schocke, dessen Einfьhren groЯe Mцglichkeiten fьr die Fragen des Rьckgangs der Sterblichkeit von den kardiogenen Schocken, im Block der intensiven Therapie unserer Klinik, geben wird.

Ich will mich bedanken und meine Kollegen in der Potsdamer Klinik, den Systematiker der Interhochschulfragen Daniela Pokorni, den Abteilungsleiter intensiver Therapie Дrztin Sabina Jander, Дrzte Marko, Swen, Ughte, Andre, Keno begrьЯen.

Aram Miridschanyan *(Chirurg)*- Mein durchgefьhrte Fortbildungskurs war sehr effektiv, weil ich die Mцglichkeit hatte, die Ausfьhrungseinstellungen der Vor- und

Nachoperation der Kranken kennenzulernen. Ich sah auch ziemlich viele Operationen, von denen fьr mich der Teilschnitt der Leber, die Operationen auf der Bauchspeicheldrьse und die Teilschnitte des Dickdarms auf laparoskopische Weise interessanter und nьtzlicher waren. Ich will bemerken, dass ich, dank

dem Professor Wenisch, die Mцglichkeit hatte, an dem in Mьnchen stattfindenden jдhrlichen Kongress der deutschen Chirurgen teilzunehmen, wobei alle Kosten die deutsche Seite versorgt hat, wofьr ich meinen herzlichen Dank, besonders dem Professor Wenisch, sage. Ich danke dem ganzen Kollektiv fьr seine Gastfreundlichkeit und Aufmerksamkeit.

Ich spreche meinen herzlichen Dank Herrn Utz und seiner Frau dafьr aus, dass sie das alles organisierten, beschьtzten, zu ihrem Haus empfingen und die Mцglichkeit der Fortbildung in einem fьhrenden Land, Deutschland дhnlich, gaben.

Srbuhi Tarchanyan *(Gastroenterologe)*- Ich habe die modernen Behandlungsmethoden kennengelernt. Das Krankenhaus hatte mit neuster Technik gesдttigte Endoskopieabteilung, wo viele diagnostische und medizinische Eingriffe durchgefьhrt werden und die in unserem Land vorlдufig nicht durchgefьhrt werden.

Ich mцchte, dass wir auch, nach der Fortbildung entsprechender Fachleute, mit дhnlichen Ausstattungen gesдttigte Abteilungen hдtten. Das Fortbildungsprogramm ist mit Bemьhungen der Organisation BBD (Berliner Burger Danken) und der Klinik Bergmann, besonders mit Bemьhungen von Uts Fjedereuter und Professor Weinke gegrьndet.



Wдhrend drei Monate der Fortbildung habe ich die Mцglichkeit gehabt, meine beruflichen Kenntnisse zu verbessern und zu vervollkommnen. Die deutschen Kollegen sind immer hilfsbereit gewesen, alle Handlungen auszufьhren, die durchgefьhrt wurden und fьr mich neu waren. Man hat mir entsprechende Literatur (aus ihrer persцnlichen Bibliothek) gegeben. Es war die Mцglichkeit geschaffen, mit ihnen nach Leipzig zu fahren und an der stattfindenden Konferenz teilzunehmen. Dank diesem Programm habe ich gelernt, Leberbiopsie zu machen, die heute in Armenien durchgefьhrt wird.

AuЯer dem beruflichen Kontakt ist die Verbindung mit einigen Дrzten vertrauter geworden, ich habe Einladungen bekommen den Abend in herzlicher Umgebung der deutchen Familie zu verbringen, ihre Kultur und nationale Werte von der Nдhe kennenzulernen.

Ich will meinen deutschen Kollegen fьr das alles danken. Ich hoffe und mцchte, dass diese Programm kontinuierlich sein wird, weil es wirklich zu Nutzen der Entwicklung der Medizin in unserem Land dient.

Lilit Sargsyan *("Muratsan" Universitдtskomplex, die Klinik fьr Chemotherapie, Kinderonkohдmatologe)*- Ich habe auch in Deutschland fortgebildet und konkreter in der Abteilung fьr Kinderonkohдmatologie des Berliner "Charite" Universitдtskrankenhauses. Ich habe die Ehre gehabt, selbst in Verbindung mit einer der hervorragenden Persцnlichkeiten der Welthдmatologie, mit dem Professor Gьnter Henze, in Verbindung zu stehen, der einer von den Autoren der mit Erforg durchgefьhrten Behandlungsprogramme der Leukдmie auf der ganzen Welt ist.

Wдhrend 2 Monate habe ich seine und die wohlwollende

Behandlung anderer Дrzte der Abteilung und das Feuerwerk glanzvoller Kenntnisse genossen. Ich habe an den tдglichen medizinischen Besprechungen, an den Analysen der schweren Fдllen, an den Arbeiten der Knochenmarkьbertragung, sowie auch an den oft organisierenden Vorlesungen und wissenschaftlichen Konferenzen teilgenommen, die zu hohe Produktivitдt hatten.

2009 war in Jerewan eine Konferenz mit unseren Bemьhungen organisiert, woran die Professoren Henze, Stakelberg, Borkhard und andere angesehene Wissenschaftler eingeladen waren. Die Beziehungen mit ihnen sind ununterbrochen. Wir konsultieren regelmдЯig "online" in den schweren klinischen Situationen und nehmen ihre Meinung an.

Ich will mein Dankeswort diesen angesehenen Menschen aussprechen und hoffe, es werden noch viele Treffen mit ihnen sein.

Einzeln danke ich dem Vorsitzenden der Stiftung BBD U. Fjerdereuter und seiner Frau B. Raffi, die mich wдhrend dieser zwei Monate in ihrer Wohnung empfingen.

Die Fortgebildeten beendeten ihre Worte mit Dankbarkeit den Menschen, die ihnen einen sehr herzlichen Empfang wьrdigten, und jederlei fцrderten und in beliebiger Frage halfen.

Die Reihe der Aufzдhlungen begann mit den Namen der Beschьtzer des Programms-Uts Fjedereuter und seiner Frau Brigit Raffi, sie wurde mit den Namen des Leiters der Klinik fьr Kardiologie, Angiologie und konservative Intensivtherapie Professor Franz Chawer Kleber, Doktor Mischel Hoffmann, Marius Wilmann und der anderen fortgesetzt.

ԻՄ ՏԵՍԱԾ ՊՈՏՍԴԱՄԸ

Պոտսդամն ինձ համար առաջին հերթին կարևոր էր, որպես հայ ժողովրդի մեծագույն բարեկամներից մեկի՝ Յոհաննես Լեփսիուսի ծննդավայր:

Մարդ, ով ոչ միայն իր ձայնը բարձրացրեց թուրքական վայրագությունների առիթով, այլև 1921-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ հանդես եկավ որպես վկա և մերկացրեց երիտթուրք ոճրագործ Թալեաթին:

ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
«Եթե մի ռասա իր բնական հատկանիշերով կոչված է դառնալու բարձր մշակույթի կրող, ապա դա հայկականն է»:

«Ես ճանաչում եմ միայն մեկ գերմանացու, որն ինձ համար ընդունելի է. դա Յոհաննես Լեփսիուսն է»:
ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ
ԱՄՆ պետական գործիչ

Պոտսդամն ինձ համար կարևոր էր նաև նրանով, որ հնարավորություն ունեցա լինել Ցեցիլիենհոֆ պալատում, ուր 1945 թվականին կայացած պոտսդամյան կոնֆերանսի շրջանակներում կայացել է քննարկում՝ Կարսի և Արդահանի վերադարձման մասին:

...Պոտսդամի խորհրդաժողովի աշխատանքները սկսելուց մեկ օր առաջ հանդիպում են ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարները՝ Մոլոտովը և Իդենը: Դաշնակից տերությունների ղեկավարների հանդիպման նախօրյակին տեղի էին ունենում այդ երկրների ներկայացուցիչների հանդիպումներ, որոնց ընթացքում լուծվում էին «ոչ շատ էական» հարցեր: Նման հարցերից էր հայկական տարածքների հարցը: Մոլոտովը նշում է, որ 1921թ. թուրքերն օգտվեցին Խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը, և հայերն իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառով Խորհրդային կառավարությունը պահանջում է օրինականորեն իրեն պատկանող տարածքները վերադարձնել:

Իդենը շատ լավ պատկերացնում էր խնդիրը, մանավանդ, որ թուրքական դիվանագետները Լոնդոնում բանակցել էին նրա հետ: Նա հայտնեց, որ թուրքերը համաձայն չեն բավարարելու Խորհրդային Միության տարածքային պահանջները: Ելնելով իրենց աշխարհաքաղաքական շահերից՝ Արևմտյան տերություններ-

ը պաշտպանության տակ առան Թուրքիային, քանի որ հայկական տարածքների հարցը պատրվակ էր դաշնակիցներից որոշ զիջումներ կորզելու համար: Ուստի խորհրդային պատվիրակությունը չպնդեց, որպեսզի այն քննարկման առարկա դառնա:

Այդ առնչությամբ հետաքրքիր է նաև Պոտսդամի խորհրդաժողովին նվիրված Չերչիլի հուշերի այն հատվածը, որը վերաբերում է այդ հարցին. «...Նույն երեկո՝ հուլիսի 18-ին, ճաշում էի Ստալինի հետ: Ես շոշափեցի Թուրքիայի և Դարդանելի հարցերը: Բնականաբար, նշեցի, որ թուրքերն անհանգստացած են: Ստալինը բացատրեց, թե իրականում ինչ է տեղի ունեցել: Թուրքերը ռուսներին առաջարկել են կնքել միություն ստեղծելու պայմանագիր: Ռուսները ի պատասխան՝ հայտարարել են, որ պայմանագիր կարելի է կնքել միայն այն դեպքում, եթե կողմերից որևէ մեկը ոչ մի պահանջատիրություն չունի մյուսի նկատմամբ, իսկ Ռուսաստանն ուզում է ստանալ Կարսը և Արդահանը, որոնք նրանից խլել էին նախորդ պատերազմի վերջում: Թուրքերը պատասխանել են, որ չեն կարող քննարկել այդ հարցը: Այդ ժամանակ Ռուսաստանը բարձրացրել է Մոնթրեոյի համաձայնագրի հարցը:



Թուրքերը պատասխանել են, որ չեն կարող քննարկել: Այդ պատճառով էլ Ռուսաստանը հայտարարել է, որ չի կարող քննարկել միություն կազմելու պայմանագիրը (Уинстон Черчилль "Вторая мировая война", М., 1998, том 6, с. 360):

Հենց Պոտսդամում նախկին դաշնակիցների միջև կախվեց երկաթյա վարագույրը, որը ոչ առանց մեծ ջանքերի «բարձրացվեց» Խորհրդային կայսրության փլուզմամբ:

Եվ ահա թե ինչպես. հենց նիստերից մեկի ժամանակ Տրումենը ստանում է հետևյալ ծածկագիրը. «Երեխաները բարեհաջող ծնվեցին», որը վերծանվում է այսպես՝ ատոմային ռումբը ստեղծված է: Հենց կոնֆերանսի քննարկումների ընթացքում միջուկային զենքի երևան գալը 180 աստիճանով փոխում է իրադրությունը: Նախ՝ ԱՄՆ-ը և Անգլիան կորցնում են հետաքրքրությունը ԽՍՀՄ-ի նկատմամբ՝ Ճապոնիայի դեմ ռազմական գործողություններ սկսելու հարցում, անմիջապես վերանում է կախվածությունը Մոսկվայից՝ հիմք տալով բացահայտ թշնամանքի և երկաթյա վարագույրի առկայության:

Պոտսդամը Գերմանիայի երկրորդ մայրաքաղաքն է եղել, իսկ մինչ այդ՝ պրուսական արքաների որսատեղի: Երբ 1961 թվականին սկսեցին կառուցել բեռլինյան պատը, ամենից շատ տուժեց Պոտսդամը: Պոտսդամում է Բրանդենբուրգյան նշանավոր դարպասը, Սան-Սուսի պալատական ռոկոկո ոճով կառուցված չքնաղ համալիրը՝ անգլիական այգիներով շրջապատված:

Շրջելով մարմարակերտ հոյակապ սրահներով՝ ոսկեզօծ ու նրբազարդ կամարների ուղեկցությամբ մտնելով բյուրեղապակու ու ոսկու փայլով շողարձակող այդ գեղեցիկ պալատները, դժվարանում ես պատկերացնել, որ այս ամենը վերականգնվել է հիմնահատակ ավերակներից: Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին օրերին անգլիական օդուժի ռմբակոծության հետևանքով այս պերճաշուք կառույցից միայն ավերակներ մնացին: Վերանորոգումից, ավելի շուտ՝ վերականգնումից հետո այն լիովին համապատասխանում է իր անվանը՝ ֆրանսերենից Սան-Սուսին թարգմանվում է՝ առանց հոգսի: Հասկանալի է՝ արքայական պալատները ժամանակին ըստ ամենայնի նպաստել են իրենց բնակիչների անհոգ կյանք վարելուն:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Դերենիկ Դեմիրճյանի ընտանիքի պատմությունը առասպելի էր նման...



Հայ նշանավոր գրող Դերենիկ Դեմիրճյանին շատ դժվար պիտի լինի դասել այն հանրահայտ մարդկանց շարքին, ովքեր հանրությանը հայտնի են իբրև «աղմկոտ» անհատներ: Բայց և այնպես, Դեմիրճյանի կյանքում եղել է դեպք, որը խզել է արտաքուստ միապաղաղ նրա կյանքի շղթան՝ հերթական անգամ վկայելով, որ անքննելի են հոգու և հույզերի աշխարհները:

Նոր էր վախճանվել գրողի սիրելի կինը, նրան մտահոգում էր նաև մայրական խնամքից զրկված հիվանդ որդին, որը գտնվում էր գրողի քրոջ խնամքի ներքո:

Այդ այն ժամանակներն էին, երբ Հայաստանի իշխանությունները հորդորում էին նրան վերադառնալ Երևան, ստանձնել կարևոր ու պատասխանատու պաշտոններ: Դեմիրճյանի համար դժվար էր կտրուկ որոշումներ կայացնելը, իսկ իրականությունն այն էր, որ նա ապրում էր չափազանց սուղ պայմաններում, մշտապես աշխատանք որոնելու և ապրուստի միջոցներ հայթայթելու մտատանջությամբ:

Եվ ահա 1923 թվականին նա հրավեր է ստանում ստանձնելու արվեստի պատմության ու գրականության դասատուի գործը հայկական դպրոցների ուսուցիչների երկամսյա դասընթացներում: Դիմիրճյանն անմիջապես համաձայնում է՝ չիմանալով, որ այդ նոր աշխատավայրում իրեն սպասում է իր կյանքի մեծագույն անակնկալը՝ նույն դպրոցի վարիչի կնոջ, ռուսաց լեզվի ուսուցչուհի Մարիա Ումուդանովանայի հետ հանդիպումը, որը նաև զավակ ուներ:

Սակայն սկզբնական հանդիպման տպավորությունն այնքան վառ էր, որ Դեմիրճյանն առաջին իսկ պահից նույնիսկ մտածել չէր ցանկանում որևէ հանգամանքի մասին:

Շատ կարճ ժամանակ անց հրապուրանքը դառնում է խորը զգացմունք, տառապանք ու մտասևեռում՝ մոռացության տալով աշխատանք, ընտանիք, գրական կյանք, դժվարություններ...

Վճիռն այլևս անբեկանելի էր. Մարիան պիտի լիներ իր կինը: Սակայն ինչպե՞ս դա անել, ինչպե՞ս իրականացնել մի ցանկություն, որը համարյա անհնարին էր և դեռ՝ վտանգներով ու ծանր հետևանքներով հղի: Հազիվ թե որևէ մեկը աջակցեր իրեն, խրախուսեր իր որոշումը, նպատակը չդարձներ հանդիմանության ու նախատինքի թիրախ:

Բայց արի ու տես, որ այդպիսի մեկը գտնվեց: Եվ դա ոչ այլ ոք էր, քան... Եղիշե Չարենցը:

Իսկ թե ինչ է լինում հետո, ավելի լավ է լսենք հենց «քաջագործության» հեղինակից՝ գրող Վահան Թոթովենցին հասցեագրված մի նամակից, որը թվագրված է 1923թ. հոկտեմբերի 29-ի ամսաթվով, այսինքն այն բանից հետո, երբ մտադրությունն արդեն իրագործված էր:

«Սիրելի Վահան, քեզ նամակ չգրելուս պատճառը այնքան էլ ծուլությունը չի եղել, որքան այն փոթորկալի հոգեկան վիճակը, որ ապրել եմ այս երեք ամիսը... Մի կնիկ փախցրի ամառանոցից: Սա է ամբողջը: Բայց ինչ դժվարություններով ու վտանգներով: Պատմությունը (մրցումը իմ և նրա անուսնու մեջ) շարունակվում է, բայց գլխավորը արի, և հիմի երկրորդ շրջանն եմ ապրում՝ ձեռքումս պահելու: Կինը ռուս է, և ամուսինը՝ Բելի Կլյուչի դպրոցների վարիչը, հույն, սարասափելի խանդոտ և բռնակալ արարածի մեկը...

Ամառս տեսա թե չէ կնոջը՝ միտքս փոխվեց. ասի՝ պիտի փախցնեմ: Ճիշտ է, մտադրությունս կատարեցի, բայց մանրամասնությունները այնքան տանջալից էին, և այդ կնոջը մարդու ձեռից դուրս քաշելը կապված էր այնպիսի անդիմադրելի խոչընդոտների հետ, որ գլուխս վտանգի մեջ էր միանգամայն. դա ոչինչ, անհնարին էր գործը գլուխ բերելը... իմ նյութական նեղ վիճակս, երբ հարկ եղավ գիշերը ավտոմոբիլ վարձել, գնալ կնոջը փախցնելու... շոֆերները գլխի ընկան, որ կարող է կրակոցների հարկ լինել, հրաժարվեցին գալու: Ստիպված եմ եղել կնոջը փախցնելու հենց իր քրոջ միջոցով, որը ինձ հակառակ էր...»:

Այնուհետև մեծ խոչընդոտներ հաղթահարելով նրանք պիտի ապրեին երկարատև ու համերաշխ կյանք՝ դժվարություններով և ուրախություններով, վերելքներով ու անկումներով:

Մարիան մշտապես մնաց ամուսնու նվիրյալ աջակիցն ու օգնականը: Իսկ Դեմիրճյանի մահից հետո տնօրինեց նրա հարուստ արխիվը՝ սերունդներին փոխանցելով գրողի գրական ժառանգությունը, որ ծնվել էր տառապանքով, երբեմն պարզապես մարդկային կարողություններից վեր ջանքերի գնով, սակայն՝ սիրով:

«Վարդանանքի» հեղինակի՝ հայ մեծ գրող Դերենիկ Դեմիրճյանի ընտանիքի պատմությունը առասպելի էր նման, որը ավարտվեց բարի վերջաբանով:

Ս.ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ 90

Սիրո աղերսներ

«Ինչ էլ գրեմ՝ ստացվում է հայեցի»: Այդպիսին է մեր արվեստի մեծաշնորհ ներկայացուցիչներից մեկի՝ Առնո Բաբաջանյանի խորհրդանշական խոստովանությունը:

Շուրջ կես դար շարունակվեց ստեղծագործող ու կատարող, երաժշտության մոլեռանդ սիրահար արվեստագետի գործունեությունը, որն առաջին իսկ քայլերից գրավեց ողջ Խորհրդային Միության երաժշտասեր հասարակության ուշադրությունը:

Ինչ ժանրի էլ դիմեր կոմպոզիտորը՝ գտնում էր դեպի ունկնդրի հոգին տանող ուղիներ:

Առնո Բաբաջանյանի ստեղծագործական հարուստ ժառանգությունը ներառում է երգեր, գործիքային կատարումներ, սիմֆոնիկ երաժշտություն: Նա ստեղծագործել է տարբեր ոճերով՝ դասական, պոպ, ջազ:

Բաբաջանյանի ստեղծագործական ոճը ձևավորվել է Արամ Խաչատրյանի և Սերգեյ Ռախմանինովի ազդեցությամբ:

Լավագույն ֆիլմերից շատերում հնչում են նրա հեղինակած կատարումները՝ «Առաջին սիրո երգը», «Երջանկության մեխանիկան», «Հարսնացուն հյուսիսից»:

Երևանի պետական բժշկական համալսարանի նիստերի դահլիճում, ԵՊԲՀ ուսանողական խորհրդարանի 20-ամյակի շրջանակներում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված Առնո Բաբաջանյանի 90-ամյակին, որը կրում էր «Սիրո նոկտյուրն» խորագիրը: Համերգին մասնակցեց համալսարանական «Մեդունի» էստրադային համույթը:

Համերգին ներկա էին Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համակարգող, ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Ավագյանը, համերգի հատուկ հյուրերն էին ՀՀ վաստակավոր արտիստուհի Գայանե Հովհաննիսյանը և երգիչ Միերը: Համերգի գեղարվեստական ղեկավարը ԵՊԲՀ սեքսոպաթոլոգիայի կլինիկայի բժիշկ-սեքսոպաթոլոգ Վրեժ Շահրամանյանն էր: Համերգի ընթացքում հնչեցին Առնո Բաբաջանյանի երգացանկից ընտրված ամենասիրված և լավագույն երգերը, որոնք փայլուն կերպով կատարեցին ՀՀ վաստակավոր արտիստ Գայանե Հովհաննիսյանը, երգիչ Միերը և մեր ուսանողները:

ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մանթաշյանցն ու Նանսենը՝ Աբովյան փողոցում

Մեր թերթի նախորդ համարում հոդված էինք տպագրել Աբովյան փողոցի նախկին տեսքի վերականգնման մասին, հույս ու համոզմունք ունենալով, որ Երևանի հնագույն փողոցը նորից կվերագտնի իր նախկին շուքն ու կոչումը:

Ուրախալի է, երբ սպասումը իրականություն է դառնում: Մայրաքաղաքի կենտրոնում, Սբ. Կաթողիկե և Սբ. Աննա եկեղեցիների հարևանությամբ՝ Աբովյան փողոցի կենտրոնական հատվածում բացվեց հայ

մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի արձանը, որի բացման արարողությանը Փարիզից մասնակցելու էին եկել Մանթաշյանցի թոռն ու ծոռը՝ 86-ամյա Ալեքսանդր Մանթաշյանց կրտսերը իր որդու՝ Միքայել Մանթաշևի հետ, ովքեր ապրելով աշխարհի եվրոպական մասում՝ շարունակում են իրենց հայ զգալ, չնայած այն հանգամանքին, որ կորցրել են իրենց մայրենի լեզուն:

Աբովյան փողոցի նոր պատմությունը վերընձյուղվում է մի արձանով, որը մարմնավորում է բարությունը, բարերարությունը և գործարար մարդու հզորությունը: Այն նաև ապագայի խորհրդանիշ է, և օրինակ բոլոր նրանց համար, ովքեր կարևորում են բարերարությունը:

Մանթաշյանցի մասին մենք տարբեր առիթներով գրել ենք՝ նպատակ ունենալով մասսայականացնել նրա գործունեությունն այն բարեբեր հունդերի տարածման մասին, որոնք այնքան առատորեն շաղ էր տալիս մեծ բարերարը, հունձքը թողնելով իր ժողովրդի ապագային: Մեծ է եղել նրա ավանդը Հայաստանի զարգացման գործում, քանի որ 200-ից ավելի այն ուսանողները, ում հովանավորել է մեծ բարերարը, ոչ միայն կրթություն ստանալով աշխարհի հեղինակավոր ուսումնական հաստատություններում վերադարձել են Հայաստան, այլև մեծ ավանդ են ունեցել մեր երկրի զարգացման գործում:

Մի քանի ամիս առաջ՝ ծննդյան 150- ամյակի առիթով Աբովյան փողոցում բացվեց նաև հայ ժողովրդի մեծ բարեկամներից մեկի՝ Ֆրիտյոֆ Նանսենի արձանը, որը եկավ լրացնելու Նանսենի անունը կրող այն բազմաթիվ անվանակոչումների ցանկը, որոնք սփռված են Հայաստանի տարբեր բնակավայրերում՝ խորհրդանշելով հայ ժողովրդի ջերմությունն ու ակնածանքը Նանսենի պայծառ հիշատակի ու անվան հանդեպ:

Օգնության հասնելով մեր ժողովրդի համար ամենածանր պահին՝ Նանսենը փրկեց ոչ միայն հարյուր հազարավոր հայերի, այլև մեր ժողովրդի սասանված հավատը առ այն, որ իր համար ամենաողբերգական պահին բարեկամներ ունի:

Ազգերի Լիգայում գաղթականների հարցերով գերագույն հանձնակատար Ֆրիտյոֆ Նանսենը նաև առաջիններից մեկը եղավ, ով անվերապահորեն դատապարտեց 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը և միջազգային բարձր ատյաններում ու քաղաքական հարթակներում իր զեկույցներով և դասախոսություններով բացահայտեց Օսմանյան կայսրության քաղաքականության էությունը՝ ազգերի իրավունքների պաշտպանության հարցը Ազգերի Լիգայում դարձնելով օրակարգային խնդիր:

Ահա ինչու՝ Հայաստանը չէր կարող անմասն մնալ Նանսենի ծննդյան 150-ամյակի միջոցառումներից և իր ամենագեղեցիկ ու վերականգնվող փողոցում տեղ չտալ իր մեծագույն բարեկամին: Իր սրտում՝ Երևանի սրտում, որովհետև հայ ժողովուրդն իր երախտավորների հիշատակը կրում է իր սրտում:

Ի դեպ՝ այս նշանակալի իրադարձությանը մասնակցելու համար Նորվեգիայից ժամանել էին Նորվեգիայի ԱԳ նախարար Ստյորեին և Նանսենի թոռնուհի Մարիտ Գրեվը:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՏՈՆ

Մայիսի վերջին կիրակին..

ՀՀ մշակույթի նախարարությունը տեղեկացնում է, որ Սայաթ-Նովայի հիշատակը հավերժացնող «Վարդատոն» ամենամյա համերգաշարն այս տարի նվիրվում է մեծ քնարերգուի ծննդյան 300-ամյակին: Հոբելյանին նվիրված հանդիսությունների մեկնարկն ավանդույթի համաձայն կտրվի Երևանում՝ Սայաթ-Նովայի հուշաղբյուրի մոտ, մայիսի 20-ին, այնուհետև՝ Թբիլիսիում, մայիսի 27-ին: Մասնակիցը դարձիր այդ միջոցառումների, և քեզ համար հասկանալի կդառնան այն գնահատականները, որ տրվել են մեծ քնարերգուին:

Թբիլիսիի սուրբ Գևորգ եկեղեցու հարևանությամբ գտնվող Մեյդան կոչվող հրապարակում ամեն տարի մայիսի վերջին կիրակի օրը տեղի է ունենում Սայաթնովյան վարդատոնը:

Նշենք, որ Հովհաննես Թումանյանի և Գևորգ Բաշինջաղյանի նախաձեռնությամբ Թիֆլիսում 1913 թվականին տոնվել է Սայաթ-Նովայի ծննդյան 200-ամյակը, իսկ մեկ տարի անց՝ մայիսի 15-ին, Թիֆլիսի ս. Գևորգ եկեղեցու բակում հայ գրողների նախաձեռնությամբ տեղի է ունեցել մեծ երգչի մահարձանի բացումը:

Այդ ժամանակներից, որոշ ընդմիջումներով, ամեն տարվա մայիսի վերջին կիրակի օրը եկեղեցու բակում, որտեղ թաղված է Սայաթ-Նովան, տեղի է ունենում Սայաթ-նովյան վարդատոն:

Մոտ 100 տարի առաջ հիմնված տոնի կենսունակության արդյունքում Սայաթ-Նովայի պոեզիայի մասին նրան նվիրված օրը ելույթներ են ունենում արվեստագետներ, նրա արվեստի երկրպագուներ, մտավորականներ...

Երևանում մեծ երգահանին նվիրված միջոցառումները տեղի են ունենում Սայաթ-Նովայի հուշաղբյուրի մոտ, որը մեծանուն քանդակագործ Արա Հարությունյանի ամենագողտրիկ գործն է՝ կանգնեցված է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դիմաց: Ճերմակ մարմարի ուղղանկյուն քարերից շարված ցանցկեն հուշաղբյուրը հարդարված է նույն սպիտակ քարից կերտած՝ փոքրինչ թախծոտ կերպարանք ստացած գլխաքանդակով, գուսանի սիրային քնարերգության հուզաշխարհը և կենդանի բառը խորհրդանշող ազգային տարազներով երիտասարդ հայուհու, վրացուհու և ադրբեջանուհու գծային թեթև պատկերումներով:

Սայաթ-Նովայից պահպանվել են մոտ 70 հայերեն, 120 թուրքերեն և շուրջ 30 վրացերեն երգեր (խաղեր): Նա կազմել է իր երգերի հիմնական ժողովածուն՝ Դավթարը, որտեղ ամփոփված է դրանց մեծ մասը:

Ս.Թ.

Ուշադրություն դարձրե՞լ եք՝ Երևանում հուշարձանների գերակշռող մեծամասնությունը հեծյալներ են, մի մասը՝ բազալտե նստած արձաններ, գրանիտե մեծածավալ կիսանդրիներ...

Սայաթ-Նովայի դեպքում այլ լուծում էր պետք, որը և գտնվեց: Այլ կերպ չէր էլ կարող լինել՝ սիրո, գեղեցկության, զգացմունքների մեծ տաղերգուին նվիրված հուշարձանը պետք է որ համապատասխաներ նրա պոեզիայի զգացմունքայնությանը, որը հաջողվել է:

Մայիսի 2-ը երազանքների իրականացման օրն էր

Երազիր, ՈՐ ԻՐԱԿԱՆԱՆԱ...

Աշխարհի ամենահեղինակավոր գիտահետազոտական կենտրոններում աշխատող հոգեբանները, ուսումնասիրելով մարդկային հոգեբանությունը և դրա անմիջական կապը տարվա եղանակների և օրերի հետ, եկել են համոզման, որ տարվա մեջ կա մի օր, որը կարելի է համարել երազանքների իրականացման օր: Այդ օրը պետք է լինի արևոտ, պայծառ, տաք,օդը պիտի լցված լինի թարմությամբ ու ոգևորող աշխուժություն պետք է տիրի շրջապատող բնության մեջ: Չգուշակեցի՞ք, թե որ օրն է: Դա երազանքների իրականացման օրն է՝ մայիսի 2-ը: Համոզված եմ, որ հենց այդ օրը իրականանում են բոլոր նվիրական երազանքները, աշխարհում միլիոնավոր մարդիկ հայացքները ուղղում են երկինք ու պահում իրենց երազանքը: Իսկ գիտե՞ք, թե ինչ է երազանքը: Երազանքը... Մի զույգ բարի աչքեր, որ նայում են աստղային երկնքին, երկու ձեռքեր, որ պարզվում են երկինք, ինչ-որ ակնկալիքով, իսկ ավելի ճիշտ՝ երազանքը աստղերն են, որ փայլում են երկնքում և երբեք հասանելի չեն: Իսկ գիտե՞ք, թե ո՞րն է տարբերությունը երազանքի և նպատակի միջև: Նպատակներ դնում ենք մեր դեմ և պարտավոր ենք իրականացնել, որովհետև դրանք մեր ուժերի սահմանում են, իսկ երազանքները կարող են այդպես էլ չիրականանալ, որովհետև երազանքները իրականացնում ենք ոչ թե մենք, այլ մեր ճակատագիրը: Իսկ ամենամեծ տարբերությունը նպատակի և երազանքի միջև այն է, որ նպատակը ունի երկու բևեռ՝ չար և բարի, վնասող և նպաստող, մինչդեռ երազանքը հենց ներդաշնակությունն է, ոչ մեկի երազանքը չի կարող վնասել մեկ ուրիշին, որովհետև նպատակը երբեմն կարող է ամպրոպաբեր թուխպերի պես մթությամբ պատել երկինքը, մինչդեռ երազանքները փոքրիկ, սպիտակ ամպիկներ են, որ միայն գեղեցկացնում են երկինքը:

Ինչի՞ մասին են մարդիկ ամենից հաճախ երազում, գուցե մեծ հարստությա՞ն, համբավի՞ կամ սիրո՞: Իմ կարծիքով դրանք ոչ թե երազանքներ, այլ նպատակներ են, որոնք իրականացնելու համար անհրաժեշտ է միայն շատ աշխատել: Իրական երազանքներ են աղետներից ու պատերազմներից խուսափելը, կրկին տեսնելը հարազատին, ում կորցրել ենք, պատկերացրեք, ինչ մեծ երազանք է՝ մի օր արթնանալ ու հասկանալ, որ լիարժեք երջանիկ ենք:

Աշխարհում ապրում են միլիոնավոր մարդիկ, նրանք բոլորը երազում են, ուրեմն աշխարհում երազանքներն էլ շատ են : Երազանքները միայն բարի են լինում, ուրեմն կարելի է ասել, որ մեր աշխարհը դեռ լի է բարությամբ:

Գյավազ Սլոյան

Ապրշած հագնվե՞լ, թե՞ ձգտել մերկության

Գարունն այս տարի ավելի ուշ եկավ: Բոլորս էլ անհամբեր ենք, ցանկանում ենք հանել ծանր ձմեռային հագուստն ու կոշիկները, բայց դեռ ցուրտ է, ուստի հարկավոր է թեթևանալ աստիճանաբար: Ընկերներով քայլում ենք կանաչների վրայով ու լոնդոնցիների նման խոսում եղանակի մասին, երբ մեր կողքով մի աղջիկ անցավ, զարմացած նայեցինք նրան ու անցանք: Երկու քայլ այն կողմ տեսանք ևս մի քանիսին: Բայց ի՞նչ կապ այդ աղջիկների և եղանակի միջև: Հենց խնդիրը դա է, որ ոչ մի կապ չկա:Դրսում 5 աստիճան ջերմություն է, իսկ նրանք հագնվել են այնպես, կարծես հունիս ամիսն է: Իսկ ի՞նչն է պատճառը, միգուցե նրանք չե՞ն մրսում, ոչ, ընդհակառակն: Նրանք հագել են 11 սմ բարձրության կրունկներով կոշիկներ, 40 սմ երկարության կիսաշրջազգեստ և 30 աստիճան անկյան ճեղքվածքով վերնաշապիկ:

Մենք սովորում ենք բժշկական համալսարանում և ավելի, քան մյուսները, պիտի գիտակցենք բոլոր այն հետևանքները, որոնց պատճառը կարող է դառնալ սխալ հագուստը:

Սովորաբար այդպիսի հագուստ հագնող աղջիկը ցանկանում է հայտնվել տղաների ուշադրության կենտրոնում, առանց գիտակցելու, որ վերջիններիս բացականչությունները իրենց հետևից ոչ թե հիացմունքի արդյունք են, այլ գռեհիկի ու անպարկեշտի գնահատման արձագանք: Ավելին՝ այդպես հագնվելու արդյունքում կարելի է կորցնել առողջությունը՝ մոռանալով, որ ամենագեղեցիկ մարդը առողջ մարդն է: Իսկ երբ խոսում ենք երիտասարդ աղջկա՝ վաղվա մոր առողջության մասին, հարցն ավելի է լրջանում: Այսքան մեղադրեցինք աղջիկներին, բայց տղաները նույնպես մեղավոր են: Նրանք նայում ու ձայնարկություններ են արձակում կարճ փեշերի հետևից, իսկ աղջիկներին հաճելի է լինել ուշադրության կենտրոնում, արդյունքում՝ բռնկվում է գռեհիկ հագուկապի համաճարակ:

Ուստի խելամիտ ու եղանակին հարիր հագնվենք, որովհետև հագուստը մեր ճաշակի և մակարդակի առաջին առհավատչյան է:

Նախամարդիկ հագուստ սկսեցին հագնել, որ դիմանան ցրտին ու ծածկեն մերկությունը, իսկ մեզանում, ցավոք, կան մարդիկ, ովքեր հաստատուն քայլերով վերադառնում են հին ու բարի ազդրակապերին:

Գյավազ Սլոյան



FOR YOU FOREIGN STUDENTS!

GET ACQUAINTED WITH THE SANAHIN



The architectural complexes of Sanahin and Haghpat are among the outstanding works of medieval Armenian architecture. In their artistic merits they transcend the limits of national culture.

The exact date of Sanahin monastery construction is not certain but the legend tells that the monastery was built in IV century, when Surb Nshan (the cross) was established. Surb Astvatsatsin church (Holy Mother of God) is the oldest in the complex; it was built in 928-944 and there are frescos remaining inside the church. The main church of Sanahin complex is Amenaprkich (Christ the Savior), it was built by Queen Khosrovanuish (wife of Ashot the Merciful). The monastery complex also consists of Surb Grigor church (X century), churches of Surb Karapet (X-XI century), Sargis chapel (XII-XIII century), three domes, belfry, library and academy. The academy (seminary of Magistros X-XI century) is a unique example of medieval Armenian architecture. School of Sanahin (also the university) played an important role in educational and cultural life of medieval Armenia. It was also established by Queen Khosrovanuish. There are more than 50 khachkars (cross-stones) in Sanahin. The most distinguished are Grigor Tudevordi (under the northern wall of St. Harutyun church, 1184, by Mkhitar Kazmich) and Sargis (1215) cross stones. These khachkars are considered to be unique examples of Armenian sculpture. The tomb of Zakarian family is also in Sanahin. Together with Haghpat Monastery, they where built in the same period and played an important role in spiritual and cultural life of Armenia. They are also the best examples of the medieval Silver Age, when Bagratuni and Orbeli Kings, and the Kyurikian and Zakarian princely families led to an extraordinary flowering of culture. The two monasteries symbolize the highest blossoming of Armenian religious architecture. Sanahin was placed on UNESCO's World Heritage List in 2000.

COUNTRY WHERE YOU STUDY!

The monastery founding is traced to the reign of King Abbas Bagratuni (929-953), but construction of the oldest building of the complex started in 976 during the reign of King Ashot the Merciful (953-977). Construction of St. Nshan church was commissioned by Queen Khosrovanuish in honor of her sons Smbat and Gurgen (Kiurike) and was finished in 991. The church is considered to be a unique example of Armenian architecture, with new stylistic direction, that was further used in many buildings of that period. The legend tells that St. Nshan church was built by architect Trdat. Besides St. Nshan church the monastery consists of three small churches (St. Jgrashen, St. Grigor, St. Astvatsatsin), belfry, gallery and academy, book depository, Gavit of "Hamazasp", Ukanants family sepulcher and Sayat Nova memorial. After the fall of the Bagratuni capital at Ani in 1064, the monastery went into decline, reviving again under the auspices of the Kiurikians and especially the Zakarians, who received the monastery as payment for military service to the Orbelian kings in Georgia, and who liberated the region from the Seljuks in the late XII century. The complex was largely completed by the mid of XIII century, having more than tripled in size and assuming position as one of Armenia's pre-eminent monasteries and centers of learning. The monastery was further decimated by the legions of Timur and then the Ottomans (XV-XVII centuries). In 1639 eastern Armenia became a part of Persia. The established peace was favorable for the monastery. Haghpat revived and resumed its mantle as a place of learning and as a manuscript center. Its most famous XVIII century resident was the courtier and troubadour Sayat Nova (1722-1795). Sayat Nova was among the defenders of Haghpat and died in 1795. Haghpat was placed on UNESCO's World Heritage List in 1996.

The Armenian diaspora has been present for over seventeen hundred years.[3] The modern Armenian diaspora was formed largely after the First World War as a result of the Armenian Genocide, which is centrally-planned extermination of the indigenous Armenian population of the Ottoman Empire.Later some armenians came back to their motherland but the rest remained out of Armenia forming the armenian diaspora. Now a lot of armenians from abroad come to recieve education in YSMU and we had and now we have students from the USA, Persia, Jordan, Iran, Cyprus Georgia, Russia, Khazakhstan, Iraq Greece, Egypt, and a lot of other countries. Armenian people often call their diaspora people cranes and are looking forward to their returning.

We've invited four students from 3rd course to a round table and the main topic of our discussion today is the Diaspora and YSMU relations, the improvements and the problems of Diaspora and their hopes and future expectations.

Usually we wright armenian about our students from diaspora but this time we've organized the interview in English language so that their classmates from abroad can also read and understand them.

So here are the questions that we asked our foreign students and they eagerly answered all of them and not only. We were so excited and inspired by the answers we got which we can say are not optimistic but actually realistic.

OUR GUESTS ARE STUDENTS FROM DIASPORA

1. *Nice to meet you here. Please tell us a bit about yourself and your families, your origin and also your interests and hobbies.*

2. *Why have you decided to chose that very profession and who or what were you influenced by ?*

3. *You entered the University as first year students and thus you have already been studying for 3 years. What improvements both in educational content and in organizational issues have you noticed? In what way did those improvements influence your studying process?*

4. *What is the greatest challenge for you in the future and what are you planning to do in your professional life?*

Anna Shukuryan

1. I am from Jordan, I have a sister, my dad's an engineer and my mom's a physicist. Well, as I said I was born in Jordan and raised there. Then in 2009 I came here to enter the University. But my mom is from Armenia and she has a family here so I can say that I am half Armenian and half from Diaspora. My sister is also planning to study in Yerevan so we'll be living here together.

2. I remember very clearly the impression when for the first time I came here, when I was 4 years old. Well because my both parents graduated from this University and the parents of my parents also graduated from this University so it was as if my destiny to become a doctor and I knew it from my very childhood. I was wearing my aunts white dress and she was taking me to hospital with her and it was so so impressive so I was simply convinced that I would become a doctor. And as I knew that, I was studying the subjects like Chemistry, Biology and Physics in a different way, cause I knew I am going to need them. And you know the strange thing about it is that as you know a lot of parents want their sons and daughters to be doctors, but my parents were telling me" no no don't do that, it's difficult", but I had definitely decided to do that. And I can see, I am lucky.

3. Well, I can see the changes everywhere - in the lecturers, in technical issues, in the lecture rooms, almost everywhere. The first thing that I noticed is that now they've started to use more multimedia in the content, and when it comes to the University facilities it's obviously getting better. The organizational matters I would say it's still the same. Of course, I would like to see even those minor changes in the assessment system, we would like them to be more computerized like the card system in the library and probably it would be good also for the University. All in all here it is pretty good, especially in the theory part. We haven't seen the practical part yet but as the theory is so perfect we even don't doubt it.And I can compare our University to any other in Europe and elsewhere. And I would like especially to stress that teachers here are more concerned about us to study,to move forward and that's a great advantage. We are small groups and the concentration part is better of course.So it'll just take time and I am sure it will be great.

4. Well, I have a different situation,because this is my country, this

is my motherland so things are different, I feel like I am at home. As I've been here before, in my childhood when I was 1 years old I can see the greatest changes in here and I am really proud of it.

Well the first thing that I can say is that the mentality is changing and the people are opening up.

Before they used to be very reserved and gloomy now people are happier and open to changes.

This might sound stupid, but even their dresses are changing. They are wearing colorful dresses.

That's some part of globalization but keeping the heritage and traditions.

And it's important to stress that we can see the changes better than hayastantsi because you guys see this every day, you're here every day and dont notice how big the changes are.When you don't see it for a long time then come and find it in a better way.

Christine Sabahguoulian

1. I was born in Iran. My both parents are doctors and I have no brothers or sisters. Well, I like hanging out a lot and sometimes we go to theaters and cinemas when free or just walking around in Yerevan streets.

2. I have almost the same situation as Anna, the difference is simply that if Anna knew that she was definitely going to be a doctor, I think I was born with that, it is in my blood. My parents

also were encouraging me not to become a doctor but that was a challenge for me and I am realizing it.

3. I completely agree with Anna. The changes that the University has undergone are noticeable. I have studied one year more than Anna, and I've seen the department innovations,the improvements in the content but certainly we would like everything to be computerized.

It's of great importace to mention one thing that we do see the changes in the medical facilities, like

the equipments, the microscopes. We know that the Rector has ordered dummies for us and it's becoming more visual, there's more multimedia.

Also concerning the third question I would like to mention that it would be better if we had wifi system everywhere, well, not only because we are from abroad but also as far as I know the education experience is based on Internet a lot nowadays and we need it very much during our studies. We of course have our netbooks and applications and we do our job and we know that it needs a lot of finance but still we hope for the better as it is very essential.

Yeah I must also mention that it's a great improvement too that the University has got its website and they put the schedule there and a lot of information so it makes our job easier.

4. I was coming to Armenia since 1997 and the changes are amazing in everything architecture, culture mentality, economics.it is really tremendous.

Abraham Anjerlioushian

1. I was born in Syria but originally I am Armenian. Here I live with my aunt . My parents are working in Syria. I like going to the gym and also dancing a lot.

3. What concerns the improvements in the University, I can say they are really noticable as my friends mentioned.The University staff is trying to realize everything possible for us to study better and to feel in comfort zone.And I am really thankful to them and I am proud that I am studying in YSMU.

4. I remember Armenia some 5 years ago, when here we had the dial up system for the Internet and it was really in a bad condition, but now the Internet industry in Armenia is more developed and has very good quality and compared to our countries it's in a better condition. In general now in Armenia everything is developing very rapidly and it's starting to compete with huge European countries.

The same questions are answered by Arash Talebi who is from Iran.



1. Hello, I am from Iran, Tehran originally, my father is a banker and my mother is a manager in a beauty salon. It's almost 6 years I am in Yerevan. I studied my high school here and then entered the University 0 course.

2. Well there are a lot of doctors in my family, my aunts and uncle. And from my very childhood I 've been observing them and I was just studying their books and magazines. So I really appreciate the specialization of doctors and my sister also decided to come and study here and so we came here together. In the future I am planning to be an orthopedist.

3. Certainly when we were first year students here, the facilities weren't so much developed also in the field of subjects and topics, but little by little we noticed the changes. So we were observing changes and I am sure in some years' time the changes will also continue . The head staff is also concerned in the matters of the lecturers qualification, they should pass some exams to get the appropriate qualification.

4. What concerns Armenia and Armenian people I would first of all say that it is a very safe country, for example in the case of security we don't have any problem especially compared to other countries. I would like Armenia also to be a very developed country in the sphere of constructions and buildings, roads and hotels, in two words to be like a well developed European country. And Armenian people are very hospitable and kind people and we don't have any problems with students, they treat us in a very kind way.

Dear students,thank you very much for your frank and very optimistic ideas and answers. I see that you are really full of energy and enthusiasm to become qualified specialists and also you are worthy citizens of your countries. I wish you all the success and luck in your further steps.

MAY CALENDAR

May 8th

The day of Erkrapah (the protectors of the country)

For defending your country you stood together, you were both soldiers and commanders, took oath to return with victory and realized those victories and in all the battles in Artsakh. And 18- year old soldiers of our army got the courage and the taste of victory from you. The enemy was defeated by the strength of your unity. And the liberation of Shushi was the first among your precious victories.

May 9

The liberation of Shushi

In 1992 May 9 armenian city Shushi was liberated. 20 years have past since that gorgeous victory. Actually we can't find anything new but certainly we must repeat the same as the value of victories raise the spirit, the victories educate the soldiers of today and make us respect the victories and the people who sacrificed their lives for the sake of the dignity of our nation.

1958, May 22

Dear reader, my biography is very interesting

The year of 1958 was commemorated in YSMU. The monthly newspaper "Future Doctor" was published for the first time. Since May 22, 1958 I have been published for the 1265 time in different editions in different styles and format, black and white….

May 26

Battle of Avarayr

Battle of Avarayr took place in 451, May 23, early in the morning.Some devisions of persian army couldn't resist and retreated.Vardan Mamikonyan and a lot of others died in the unequal battle.Armenians had a lot of victims including Vardan Mamikonyan and 9 ministers.But persian army also had victims about 3544 soldiers.Armenian church sanctifies the soldiers and considers them as martyrs of homeland.Till now Vardanants holiday is commemorated by armenians.

1918, May 28

The proclamation of the first republic of Armenia

The proclamation of the republic was preceded by the battle of Bash Aparan,Sardarapat, Gharakilisa due to which Armenians were able to regain the state after long 543 years.

Two days after Sardarapat the Armenian national council proclaimed the regeneration of Armenian state by national flag, anthem and arm.

And in 1989 May 26 was fixed as the proclamation of Armenian first republic.

May 28

Battle of Sardarapat

The victory of Sardarapat has its unique place in the history of Armenian nation.The Sardarapat Battle took place in May 21-29 between armenian and turkish armies.The turkish government had planned to occupy not only Western Armenia but also eastern Armenia and the whole Caucases and also to exterminate armenian nation.